

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ



*ՄՏՐԱՏԵԳԻԱԿԱՆ ՊԼԱՆ
(2018-2022)*

ԿԱՊԱՆ 2018

Ստրատեգիական պլանը մշակվել է ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի տնօրենի 2017թ. սեպտեմբերի 1-ի թիվ հրամանով ձևավորված ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի 2017 - 2021թթ. Ստրատեգիական պլանի մշակման աշխատանքային խմբի (Հավելված 1) կողմից՝ ի կատարումն ՀԱՊՀ Հոգաբարձուների խորհրդի 29.10.2016թ. թիվ 10/16-02 որոշման հանձնարարականի:

«ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի 2018 - 2022թթ. Ստրատեգիական պլան»-ը քննարկվել և երաշխավորվել է ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի գիտական խորհրդի 13.12.2017թ. թիվ 04/02 որոշմամբ, հաստատվել է ՀԱՊՀ Գիտական խորհրդի 11.12.2018թ. թիվ 28 որոշմամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	4
Մասնաճյուղն այսօր	5
Մասնաճյուղի առաքելությունը	6
Մասնաճյուղի հեռապատկերը	6
Մասնաճյուղի զարգացման ստրատեգիայի նպատակները, ինդիքները և դրանց իրագործման ուղղությունները.....	8
Նպատակ 1	8
Նպատակ 2	11
Նպատակ 3	15
Նպատակ 4	18
Նպատակ 5	23
Նպատակ 6	26
Նպատակ 7	29
Նպատակ 8	32
Վերջաբան.....	35
Հավելված 1	36
Հավելված 2	37
Հավելված 3	50

ՆԱԽԱԲԱՆ

ՀՊՃՀ (ՀԱՊՀ) Կապանի մասնաճյուղի առաջին ստրատեգիական պլանը (2007-2011թթ.) ստեղծվել է 2006/2007 ուստարում, իսկ **երկրորդը՝ (2012-2016թթ. ռազմավարական ծրագիրը)**՝ 2012/2013 ուստարում:

Մասնաճյուղի երրորդ (2018-2022թթ.) ստրատեգիական պլանը մշակվել է մասնաճյուղի տնօրենի 2017թ. հուլիսի 20-ի թիվ 137 և 2017թ. սեպտեմբերի 01-ի թիվ 147 հրամաններով ձևավորված աշխատանքային խմբի (Հավելված 1) կողմից՝ ի կատարումն ՀԱՊՀ Հոգաբարձուների խորհրդի 29.10.2016թ. թիվ 10/16-02 որոշման և մասնաճյուղի Գիտական խորհրդի 2017թ. մայիսի 5-ի թիվ 010/14 որոշման հանձնարարականների: Պլանի նախագծի ստեղծման համար հիմք են հանդիսացել նախորդ պլանի իրականացման արդյունքների վերլուծությունը (հակիրճ ներկայացված է Հավելված 2-ում), արտաքին ու ներքին միջավայրային գործոնների և հնարավոր մարտահրավերների ուսումնասիրումը և դրանից բխող SWOT-վերլուծությունը (Հավելված 3)՝ ուղղված մասնաճյուղի ուժեղ ու թույլ կողմերի, արտաքին հնարավորությունների և սպառնալիքների բացահայտմանը: Այս ուսումնասիրությունների արդյունքում որոշվել են ստրատեգիական պլանավորման հիմնական խնդիրներն ու ելակետային պայմանները, սահմանվել են մասնաճյուղի ռազմավարական գերակայությունները:

Մասնաճյուղի զարգացման նոր ռազմավարության մշակման համար ուղենիշներ են հանդիսացել.

- ՀԱՊՀ-ի և մասնաճյուղի առաքելության նորացված և ճշգրտված ձևակերպումը,
- Համալսարանի համակողմանի միջազգայնացման միտումը և միջազգայնորեն ճանաչված հետազոտական համալսարան և ինժեներական կրթության տարածաշրջանային առաջատար կենտրոն դառնալու հավակնությունը,
- մասնաճյուղի կայուն զարգացման ռեսուրսային նախադրյալների ապահովման և ֆինանսական աղբյուրների բազմազանեցման անհրաժեշտությունը,
- մասնաճյուղի SWOT-վերլուծությունում բերված մրցակցային առավելությունների և հնարավորությունների օգտագործումը, ակնկալվող արտաքին սպառնալիքների և մարտահրավերների դիմակայումը,
- ուսուցման որակի շարունակական բարձրացման և միջազգային չափանիշներին համապատասխանեցման անհրաժեշտությունը:

Առաջնորդվելով վերոնշյալ ուղենիշներով՝ առաջադրվել են մասնաճյուղի գործունեության հիմնական բնագավառներն արտացոլող ստրատեգիական 8 նպատակները, դրանցից բխող խնդիրները և այդ խնդիրների լուծման ռազմավարության հիմնական ուղղությունները: Բոլոր նպատակներն ուղեկցվում են առաջընթացի գնահատման

քանակական և որակական բնույթի ցուցիչներով՝ պլանի գործողության հնգամյա ժամանակահատվածի կտրվածքով: Պլանը եզրափակվում է համառոտ վերջաբանով, որը նպատակ ունի ներկայացնել կողմնորոշիչ ցուցումներ պլանի իրականացման գործընթացի կազմակերպման, արդյունքների ընթացիկ ու ամփոփիչ գնահատման վերաբերյալ, ինչպես նաև պլանում անհրաժեշտ ճշգրտումներ կատարելու կարգը:

Պլանի նախագիծը տեղադրվել է մասնաճյուղի կայքում և հղվել բոլոր ստորաբաժանումներին՝ քննարկման և առաջարկությունների ներկայացման համար: Քննարկումների արդյունքում լրամշակված պլանի նախագիծը քննարկվել է ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի գիտական խորհրդում և ներկայացվել ՀԱՊՀ Գիտական խորհրդի հաստատմանը:

ՄԱՍՆԱՃՅՈՒՂՆ ԱՅՍՕՐ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղը (մինչև 2002թ. նոյեմբերը՝ կրթահամալիր) կազմավորվել է ՀՊՀՀ գիտական խորհրդի 1996թ. հոկտեմբերի 2-ի թիվ 42 որոշման հիման վրա տրված ռեկտորի հոկտեմբերի 3-ի թիվ 321 հրամանով՝ 1984թ. ԵրՊԻ-ի հեռակա ուսուցման ֆակուլտետին կից ստեղծված Կապանի ուսումնախորհրդատվական կետի հիմքի վրա:

2015թ. հունիսի 20-ին «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի վերակազմավորումից հետո համալսարանի հոգաբարձուների խորհրդի նիստի 06/15-03 որոշմամբ ստեղծվեց ՀՊՀՀ Կապանի մասնաճյուղի իրավահաջորդ ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղը:

Մասնաճյուղն իրականացնում է բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցում՝ 6 մասնագիտությունների գծով: Մասնաճյուղում այսօր ճարտարագիտության բակալավրի կրթական ծրագրով սովորում են շուրջ 400 ուսանող, որի ինքնակառավարման մարմինը՝ ուսանողական խորհուրդը, կազմակերպում և բովանդակալից է դարձնում ուսանողական կյանքը:

Մասնաճյուղի հիմնական դասախոսական կազմում ընգրկված է 34 դասախոս. 13 աստիճանակիր դասախոս՝ 2 գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, 11 գիտությունների թեկնածու (որից 10-ը դոցենտ), 1 ավագ դասախոս, 2 ասիստենտ և 18 դասախոս:

Մասնաճյուղն առ այսօր տվել է 1500-ից ավելի շրջանավարտ: Շրջանավարտներից շատերը արտադրության կառավարիչներ են ու զբաղեցնում են ղեկավար և պատասխանատու պաշտոններ:

Մասնաճյուղը սերտորեն համագործակցում է արտադրական ձեռնարկությունների հետ ուսանողների պրակտիկաների, արտադրության մասնագետների վերապատրաստման,

որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպման և գիտահետազոտական ոլորտներում:

Մասնաճյուղում հաջողությամբ գործում է լրացուցիչ կրթության համակարգը, ստեղծվել է GOLDI հեռավար հիբրիդային լաբորատորիան, որը ներկայումս ներդրվում է ուսումնական գործընթացում:

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղն ինժեներական, մասնավորապես լեռնամետալուրգիական և տեղեկատվական տեխնոլոգիաների կողմնորոշմամբ բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի հիմնական առաքելությունն է.

- դառնալ Սյունիքի մարզի ճարտարագիտական կրթության, տեխնոլոգիական մտքի տարածաշրջանային կենտրոն, որն իրականացնում է մարզի տնտեսության կարիքները և հասարակության կրթական պահանջմունքները բավարարող գիտակրթական ծրագրեր, որի մուտքը և կրթական ռեսուրսները մատչելի են սովորողների ամենատարբեր սոցիալական և տարիքային խմբերին,
- ապահովել մարզի տնտեսությունը՝ մասնավորապես արդյունաբերությունը բարձրորակ ճարտարագետներով և արտադրության կառավարիչներով,
- նպաստել տարածաշրջանի գիտատեխնիկական ներուժի հզորացմանը,
- ստեղծել անհրաժեշտ պայմաններ ուսանողների համակողմանի ու ներդաշնակ զարգացման, բարոյական ու համամարդկային արժեքներին դավանող, ազգային ոգով դաստիարակված, օրինապահ քաղաքացու պատրաստման համար:

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԵՌԱՊԱՏԿԵՐԸ

Իր առաքելությունը կատարելու համար Կապանի մասնաճյուղը ձգտում է դառնալ ՀԱՊՀ-ի տարածաշրջանային քաղաքականությունն իրականացնող բուհ,

- որն էական դերակատարություն կարող է ունենալ Սյունիքի մարզի տնտեսական զարգացման տարածաշրջանային ծրագրերում,
- որը մարզի տնտեսության կարիքները և հասարակության կրթական պահանջմունքները բավարարող գիտակրթական ծրագրեր իրականացնող, արդյունաբերությունը

բարձրորակ ճարտարագետներով և արտադրության կառավարիչներով ապահովող ինժեներական կրթության առաջատար տարածաշրջանային կենտրոն է,

- որը նպաստում է տարածաշրջանի գիտատեխնիկական ներուժի զարգացմանը,
- որի մուտքը և կրթական ռեսուրսները մատչելի են սովորողների ամենատարբեր սոցիալական և տարիքային խմբերին,
- որը փոփոխվող միջավայրային պայմաններում ժամանակին և համարժեքորեն արձագանքում է տարածաշրջանի տնտեսության ու հասարակության փոփոխվող կարիքներին և աշխատաշուկայի պահանջարկին,
- որն ապահովում է առարկայական բանավեճի, բազմակարծության արտահայտման և ազատ հաղորդակցություն հնարավորություն բոլորի համար՝ մասնակից և պատասխանատու դարձնելով նրանց մասնաճյուղի զարգացմանն ու գործունեության արդյունքների համար,
- որը պոլիտեխնիկական լավագույն ավանդույթներին դավանողն ու տարածողն է Սյունիքի մարզում,
- որը կարողանում է հարաբերություններ հաստատել արտաքին միջավայրի հետ և ունակ է ապահովելու ֆինանսական կայունություն և անհրաժեշտ սոցիալական երաշխիքներ մասնաճյուղի բոլոր աշխատողների համար:

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՏՐԱՏԵԳԻԱՅԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ
ԴՐԱՆՑ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՆՊԱՏԱԿ 1. ԸՆԴԼԱՅՆԵԼ, ԲԱԶՄԱԶԱՆԵՑՆԵԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՄՈՒՏՔԸ ԵՎ
ԱՊԱՀՈՎԵԼ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՓՈՓՈԽՎՈՂ
ՄԻՋԱՎԱՅՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Մասնաճյուղը հանդիսանալով Սյունիքի մարզի ճարտարագիտական աշխատուժի և արտադրության կազմակերպիչների վերարտադրության ու զարգացման հիմնական աղբյուրը՝ պարտավոր է պահպանել իր ուսանողական համակազմը՝ հնարավորինս ընդլայնելով և համապատասխանեցնելով իր մուտքը Սյունիքի տնտեսական կարիքներին, աշխատաշուկայի ու կրթաշուկայի պահանջներին:

Մասնաճյուղի զարգացման հիմնական նախապատվություններից մեկը կրթական ռեսուրսների և ծառայությունների մատչելիության ապահովումն է բնակչության տարբեր սոցիալական և տարիքային խմբերի, մասնավորապես արտադրության աշխատողների համար, ինչը պահանջում է ընդլայնել և կատարելագործել լրացուցիչ և շարունակական կրթական ծառայությունները՝ հասանելի դարձնելու համար մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման կարիք ունեցող մասնագետներին:

Վերջին տարիներին տարածաշրջանում դիտվում է մասնաճյուղի դիմորդների հոսքի շարունակական նվազման միտում՝ պայմանավորված ժողովրդագրական և այլ արտաքին միջավայրային անցանկալի փոփոխություններով: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ մասնաճյուղի կարևորագույն նպատակը պետք է լինի բավարար թվաքանակով ուսանողական կայուն համակազմի ապահովումը և հնարավոր ավելացումը՝ բազմազանեցնելով մասնաճյուղի մուտքային հնարավորությունները:

Ստեղծված իրավիճակում կարևոր նշանակություն է ստանում մասնաճյուղի կազմում ավագ դպրոցի ստեղծումը, ինչը հնարավորություն կընձեռի ձևավորել սեփական դիմորդների հոսքը:

ԽՆԴԻՐ 1.1. Բարելավել մասնաճյուղի ընդունելության պլանավորման գործընթացը՝ համապատասխանեցնելով ընդունելությունը տարածաշրջանի աշխատուժի շուկայի պահանջներին:

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները

- Ձևավորել մասնաճյուղի ընդունելության մասնագիտությունների իրատեսական հեռանկարային ցանկ և չափաքանակներ՝ հաշվի առնելով արտաքին միջավայրային վերլուծության արդյունքները, մասնավորապես մասնագիտական կրթության և աշխատուժի շուկայի առկա զարգացումները, մասնագիտությունների կանխատեսվող պահանջարկը և մասնաճյուղում ու ՀԱՊՀ-ում դրանց իրականացման համար առկա գիտամանկավարժական ներուժի հնարավորությունները:

- Տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջարկի հաշվառմամբ հնարավորինս ընդլայնել ընդունելությունը՝ ձգտելով լայնորեն օգտագործել հեռաուսուցման արդիական տեխնոլոգիաների հնարավորությունները, մասնավորապես Տեմպուս նախագծի շրջանակում մասնաճյուղում ստեղծված GOLDI հեռավար հիբրիդային լաբորատորիան և հեռաուսուցման տեխնոլոգիական կարողությամբ լսարանները:

ԽՆԴԻԳ 1.2. Ապահովել դիմորդների կայուն հոսք՝ բազմազանեցնելով մասնաճյուղի մուտքային հնարավորությունները ժողովրդագրական և այլ միջավայրային անցանկալի փոփոխությունների պայմաններում:

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները

- Բազմազանեցնել մասնաճյուղի ընդունելության գովազդարշավը, մասնաճյուղային կառույցների հետ համատեղ առավելագույնս ընդգրկելով գործատուներին և շրջանավարտներին՝ լայնորեն օգտագործելով գովազդային նոր տեխնոլոգիաներ ու հաղորդակցության ժամանակակից միջոցներ:
- Արդյունավետ կերպով օգտագործել մասնաճյուղի ու դպրոցների ավարտական դասարանների միջև կապը՝ նպատակ ունենալով օգնել աշակերտներին ճիշտ ընտրելու ապագա մասնագիտությունը, դպրոցներին տրամադրել մասնաճյուղը և ուսուցանվող մասնագիտությունները գովազդող նյութեր՝ հաճախակի կազմակերպելով «բաց դռների օրեր» և ակնկալվող դիմորդների ճանաչողական այցեր մասնաճյուղ:
- Տարածաշրջանի դպրոցներում ստեղծել հենակետային դասարաններ, կազմակերպել անվճար խորհրդատվություններ և նախապատրաստական դասընթացներ ակնկալվող դիմորդների համար:
- Մեծացնել միջին մասնագիտական ուսումնական հաստատություններից բարձր առաջադիմությամբ և ուսուցումը բակալավրի ծրագրով երկրորդ կուրսում շարունակելու իրավունքով անձանց հոսքը մասնաճյուղ՝ զարգացնելով համագործակցությունը տարածաշրջանի քոլեջների հետ:
- Մասնաճյուղի կազմում ստեղծել ավագ դպրոց՝ ապահովելով շրջանավարտների առավելագույն ներհոսքը մասնաճյուղ:
- Մասնաճյուղում իրականացնել ուսուցում նաև միջին մասնագիտական կրթական ծրագրով:

ԽՆԴԻԳ 1.3. Ստեղծել նախադրյալներ մասնաճյուղի ուսանողական համակազմի պահպանման և զարգացման համար:

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները.

- Իրականացնել արտաքին միջավայրային վերլուծություն՝ բարձրագույն կրթության և աշխատուժի տարածաշրջանային շուկայում առկա միտումների բացահայտման, ուսանողական համակազմի զարգացման, ներքին հնարավորությունների գնահատման նպատակով:

- Ձևավորել ուսանողական համակազմի զարգացման հիմնավորված պլան՝ հաշվի առնելով տարածաշրջանում մասնագիտությունների պահանջարկը և դրանց ուսուցման որակի ապահովման ներքին ռեսուրսները:
- Ջարգացնել ուսանողներին ֆինանսական օգնության և ուսումնական առաջադիմության նյութական խրախուսման ներհամալսարանական և արտահամալսարանական ձևերը՝ օգտագործելով նաև պատվիրատու կազմակերպությունների հնարավորությունները:

ԽՆԴԻՐ 1.4. Բազմազանեցնել և բարելավել լրացուցիչ և շարունակական կրթության համակարգը՝ աշխատուժի շուկայի պահանջմունքներին համահունչ:

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները.

- Իրականացնել լրացուցիչ և շարունակական մասնագիտական կրթության պահանջարկի ամենամյա մոնիթորինգ՝ պահանջարկված դասընթացների ցանկի ճշգրտման նպատակով:
- Ջարգացնել մասնաճյուղի լրացուցիչ և շարունակական կրթության համակարգը՝ մասնաճյուղի մասնագիտական ներուժի ընձեռած հնարավորություններին հաշվառմամբ ճշգրտելով առաջարկվող դասընթացների ցանկը և համապատասխանեցնելով այն աշխատաշուկայի պահանջներին:
- Կազմակերպել մասնագետների վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներ տարածաշրջանի ձեռնարկությունների և կազմակերպությունների աշխատողների համար:
- Լրացուցիչ և շարունակական կրթության կազմակերպման գործընթացում կիրառել նաև հեռաուսուցման նոր տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ (հինգ տարվա կտրվածքով).

- Աշխատաշուկայի պահանջմունքներին և դիմորդների կրթական կարիքներին համահունչ պլանավորված ընդունելություն, հեռանկարային մասնագիտությունների ձևավորված անվանացանկ:
- Կապանի և Քաջարանի ավագ դպրոցներում գործող առնվազն 1 հենակետային դասարան:
- Ընդունելության ընդհանուր ծավալը առնվազն 120, այդ թվում՝ միջին մասնագետի ծրագրով – 20, բակալավրի ծրագրով (առկա և հեռակա) – 90, լրացուցիչ և շարունակական կրթության ծրագրերով – 10:
- Ուսումնառողների համակազմը հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերով առնվազն 430, այդ թվում՝ բակալավրի ծրագրով (առկա և հեռակա) – 400, լրացուցիչ և շարունակական կրթության ծրագրերով – 10, միջին մասնագիտական կրթական ծրագրով՝ 20 :

**ԼՊԱՏԱԿ 2. ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ՈՒՍՄԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆՆ՝
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՎՈՂ ԵՎ ՎԵՐԱԶԻՆՎՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԻՆ
ՀԱՄԱՀՈՒՆՉ**

Ուսուցման որակի շարունակական բարձրացումը, ուսումնական գործընթացի կազմակերպման կատարելագործումը մասնաճյուղի բարձր վարկանիշի ապահովման և նրա շրջանավարտների պահանջարկվածության կարևոր գրավականն են:

Սյունիքի լեռնահանքային ձեռնարկությունների արդիականացումը և Բոլոնիայի գործընթացի շրջանակներում եվրոպական բարձրագույն կրթական տարածքին (ԵԲԿՏ) ՀԱՊՀ-ի ինտեգրվելու անհրաժեշտությունը պահանջում են կոմպետենտային (TUNING) մեթոդաբանության վրա հիմնված ուսանողակենտրոն ուսուցման կազմակերպման եվրոպական համակարգի կիրառում: Այն ենթադրում է որակի ներքին ապահովման համակարգերում վերախմբագրված ESG չափանիշների ու պահանջների պահպանում, ինչը հանգեցնում է մասնաճյուղում ուսումնական գործընթացների կազմակերպման, ուսուցման որակի գնահատման կատարելագործված, Բոլոնիայի գործընթացի պահանջներին համահունչ մոտեցումների ձևավորմանը և ներդրմանը:

Հաշվի առնելով կոմպետենտային մեթոդաբանության վրա հիմնված ուսուցման կազմակերպման եվրոպական համակարգում լաբորատոր և գործնական պարապմունքների առանցքային դերը՝ անհրաժեշտ է զարգացնել մասնաճյուղի լաբորատոր բազան և արդյունավետ օգտագործել գործատու ձեռնարկությունների հետազոտական լաբորատորիաները:

Կարևորագույն խնդիրներից է նաև մասնաճյուղի գործունե մասնակցությունը որակի արտաքին գնահատման և հավատարմագրման համալսարանական գործընթացներին՝ ապահովելով այդ գործընթացների թափանցիկությունն ու հրապարակայնությունը:

ԽՆԴԻԲ 2.1. *Ավարտել մասնաճյուղում ուսուցման որակի գնահատման և ապահովման ներհամալսարանական համակարգի ներդրման գործընթացը՝ համահունչ Սյունիքի արդիականացվող և վերազինվող արդյունաբերության պահանջներին:*

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները.

- Ուսուցման որակի գնահատման և ապահովման եվրոպական վերախմբագրված ESG չափանիշների ու պահանջների հիման վրա ՀԱՊՀ-ում մշակվող համակարգի կիրառությամբ իրականացնել մասնաճյուղի ուսումնական ստորաբաժանումների գործունեության վերլուծության ու որակի գնահատման գործընթացները և դրանց արդյունքների հիման վրա պլանավորել և իրականացնել ուսուցման որակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ:
- Պահպանել և հնարավորինս ընդլայնել ՀԱՊՀ որակի ապահովման էլեկտրոնային առցանց համակարգում (ՈԱԷԱՀ)՝ ներառված մասնաճյուղային կառույցի գործառույթային բոլոր հիմնական հնարավորություններն՝ ապահովելով լիարժեք կիրարկման և տեխնիկական սպասարկման համար անհրաժեշտ պայմաններ:

- Փորձարկումներից ու անհրաժեշտ լրամշակումներից հետո, մասնաճյուղում ներդնել ՀԱՊՀ-ում մշակված դասախոսական կազմի ամենամյա վարկանիշային գնահատման էլեկտրոնային առցանց համակարգը:
- Իրականացնել և ընդլայնել կրթական ծրագրերից ու առանձին դասընթացներից ուսանողների և շրջանավարտների բավարարվածության գնահատման և ուսուցման որակի բարձրացմանն ուղղված սոցիոլոգիական ամենամյա հարցումներ:
- Ապահովել բարենպաստ պայմաններ որակի գնահատման գործընթացներում ուսանողների լայն մասնակցության համար:

ԽՆԴԻԳ 2.2. *Ապահովել մասնաճյուղի մասնակցությունը առկա կրթական ծրագրերի բովանդակային և կառուցվածքային վերանայման գործընթացին՝ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան:*

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները.

- Նախաձեռնել և իրականացնել մասնաճյուղի ուսումնական պլանների և ծրագրերի արտաքին փորձաքննություն գործատու ձեռնարկություններում:
- Պարբերաբար իրականացնել առկա աշխատաշուկայի և նրա զարգացման մոտակա միտումների վերլուծություններ՝ մասնաճյուղի կողմից առաջարկվող մասնագիտությունների ցանկը օպտիմալացնելու նպատակով:
- Իրականացնել մասնաճյուղի կրթական ծրագրերից գործատուների բավարարվածության վերաբերյալ ամենամյա պարտադիր ուսումնասիրություններ՝ ծրագրերի համապատասխանեցման, լավարկման և շրջանավարտների ծառայունակության բարձրացման նպատակով:

ԽՆԴԻԳ 2.3. *Բարելավել դասավանդման և ուսումնառության կազմակերպման, գիտելիքների գնահատման տեխնոլոգիաները՝ նպատակ ունենալով բարձրացնել կրթության որակն ու արդյունավետությունը:*

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները.

- Մասնաճյուղում ներդնել և կիրառել ուսուցման ժամանակակից մեթոդներ ու տեխնոլոգիաներ, մասնավորապես, լայնորեն կիրառել մասնաճյուղում ներդրված էլեկտրոնային ուսուցման Moodle համակարգը (<http://moodle.haphkapan.com/>):
- Մասնաճյուղում ներդնել առաջավոր մանկավարժական փորձի խրախուսման և տարածման ներհամալսարանական մեխանիզմներ, արդյունավետ օգտագործել Համալսարանի Շարունակական կրթության և դասախոսների վերապատրաստման կենտրոնի հնարավորությունները մասնաճյուղում դասավանդման արդի մեթոդների ու ձևերի ներդրման համար:
- Կիրառել ուսումնառության և դասավանդման արդյունավետ այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են՝ կարճաժամկետ ինտենսիվ դասախոսությունները (հատկապես

հրավիրված մասնագետների կողմից), սեմինարներն ու քննարկումները, գործնական և նմանակային խաղերը՝ օգտագործելով տեղեկատվական արդիական տեխնոլոգիաները:

- Ակտիվորեն համագործակցել երևանյան կրթահամալիրի ամբիոնների հետ՝ մասնաճյուղի ուսումնական գործընթացում ուսուցման բարձր որակ ապահովելու նպատակով ներգրավելով դասախոսներ երևանյան կրթահամալիրից:
- Ավտոմատացնել ակադեմիական առաջադիմության արդյունքների էլեկտրոնային գրանցման, վիճակագրական մշակման և կառավարման գործող համակարգը:
- Ձգտել որակապես բարելավել ուսանողների գործնական պատրաստականությունը, հնարավորինս արդյունավետ դարձնել արտադրական և նախաավարտական պրակտիկաները՝ ընդլայնելով պատվիրատու ձեռնարկություններում պրակտիկայի ընթացքում ուսանողների վճարովի աշխատանքի ընդունման փորձը և ավարտական կուրսերի ուսանողների համատեղված արտադրական փորձառության հնարավորությունները:
- Մասնաճյուղում աշխատանքներ տանել վերականգնելու հեռակա ուսուցման առավել բարձր որակ ապահովող առկա-հեռակա ուսուցման ձևը:
- Բարձրացնել լաբորատոր պարապմունքների արդյունավետությունը՝ լավարկելով մասնաճյուղի ուսումնասօժանդակ կազմի (լաբորատորիաների վարիչների և լաբորանտների) հաստիքները, բարձրացնելով նրանց աշխատանքի արդյունավետությունը:
- Ուսուցման բարձր որակ ապահովելու նպատակով աշխատանքներ տանել գործատու ընկերությունների համաֆինանսավորմամբ մասնաճյուղում ուսումնագիտական կենտրոն ստեղծելու ուղղությամբ:
- Ապահովել ուսումնական ենթակառուցվածքի արդիականացումը, տեխնոլոգիական կարողությամբ լսարանների և վիրտուալ լաբորատորիաների ցանցի առաջանցիկ զարգացումը:

ԽՆԴԻՐ 2.4 . Մասնակցած չափանիշների պահանջներին համապատասխան իրականացնել բակալավրական կրթական ծրագրերի ներքին մշտադիտարկում:

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները.

- Ապահովել, ՄԿՈԱԱԿ-ի կողմից իրականացված, ՀԱՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական խմբի վերհանած խնդիրների հաղթահարման և Համալսարանի գործունեության հետագա բարելավման «Գործողությունների պլան-ժամանակացույցի» կատարման ներքին մոնիթորինգը:
- Շարունակաբար կատարելագործել մասնաճյուղի գործունեության ինքնագնահատման և տարեկան հաշվետվությունում օգտագործվող չափանիշները՝ նպատակ ունենալով դրանք դարձնել հնարավորինս համահունչ որակի արժևորման արդի պահանջներին ու չափանիշներին:
- Ապահովել ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրումների չափանիշների ու գործընթացների թափանցիկությունը և արդյունքների հրապարակայնությունը

մասնաճյուղի ներքին և արտաքին շահեկիցների համար, ինչպես նաև, ուսանողների ու գործատուների հնարավորինս ակտիվ մասնակցությունը որակի գնահատման գործընթացներում:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ (հինգ տարվա կտրվածքով).

- Ամենամյա սոցիոլոգիական հարցումների իրականացում ուսանողների շրջանում:
- Ուսուցման որակի ամենամյա գնահատման և դրա արդյունքների հրապարակման պրակտիկայի արմատավորում:
- Մեկ դասախոսին ընկնող մեթոդական աշխատանքների թիվը 5 տարում՝ առնվազն 1:

**ՆՊԱՏԱԿ 3. ԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՄԲ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ**

Մասնաճյուղի առաքելությունը գիտահետազոտական ոլորտում նախատեսում է նրա մասնակցությունը Սյունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում, տեխնոլոգիական նորաստեղծության (ինովացիոն) կառուցվածքի ձևավորում, գործընկեր ձեռնարկությունների հետ հետազոտական նախագծերի համատեղ իրականացում՝ դրանց արդյունքների առևտրայնացման պայմանով, մասնաճյուղի մասնակցությունը ՀԱՊՀ-ում իրականացվող տարածաշրջանային և միջազգային գիտական ծրագրերում: Նշված առաքելության իրականացման հիմնական նախադրյալը մասնաճյուղի գիտական ներուժի պահպանումն ու զարգացումն է՝ արդյունավետ օգտագործելով Համալսարանի և այլ բուհերի ասպիրանտուրան և հայցորդության ինստիտուտը: Անհրաժեշտ է նաև հետազոտական աշխատանքներում դասախոսական կազմի, հատկապես աստիճանակիր երիտասարդ դասախոսների, ներգրավման համար ստեղծել նպաստավոր պայմաններ և խրախուսման մեխանիզմներ, ինչպես նաև համակողմանիորեն զարգացնել մասնաճյուղ-արդյունաբերություն գիտահետազոտական համագործակցությունը՝ օգտագործելով վերջին տարիներին Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ֆինանսավորմամբ հետազոտական նախագծի կատարման հաջողված փորձը:

ԽՆԴԻՐ 3.1. Ապահովել մասնաճյուղի գիտական ներուժի կայուն զարգացումը, ստեղծել նպաստավոր պայմաններ ու խրախուսման մեխանիզմներ հետազոտական աշխատանքներում դասախոսական կազմի ներգրավման համար:

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները.

- Մշակել մասնաճյուղի գիտական ներուժի զարգացման հեռանկարային պլան՝ ելնելով դասախոսական կադրերի պահանջարկից և արտադրության գիտատեխնիկական առաջընթացի պահանջմունքներից:
- Դասախոսների աշխատանքի արդյունավետության գնահատման, նրանց միջտարակարգային առաջաշման կարևոր ցուցանիշ համարել մասնակցությունը հետազոտական աշխատանքներին, ինչպես նաև մագիստրանտների և ասպիրանտների գիտական ղեկավարության հանգամանքը:
- Օժանդակել մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի ընդգրկմանը ՀԱՊՀ-ում իրականացվող միջազգային գիտական նախագծերում, ապահովել անհրաժեշտ տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն նախագծերի որոնմանը և հայտերի մշակմանը, աջակցել աշխատակիցներին օգտվելու գիտատեղեկատվական ցանցերից ու հաշվողական ռեսուրսներից՝ օգտագործելով Համալսարանի հնարավորությունները:
- Աշխատանքներ տանել մասնաճյուղում հետազոտական լաբորատորիաների ստեղծման ուղղությամբ:

ԽՆԴԻՐ 3.2. Ապահովել մասնաճյուղում կատարվող գիտական աշխատանքների ծավալի աճը և արդյունավետության բարձրացումը, փորձարարական բազայի ու ինֆորմացիոն ապահովման զարգացումը, համալսարանի դասախոսների և ուսանողների առավելագույն ներգրավումը գիտահետազոտական աշխատանքներում:

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները.

- Իրականացնել մասնաճյուղի գիտահետազոտական ոլորտի նյութատեխնիկական բազայի առկա վիճակի վերլուծություն, ստեղծել համապատասխան տվյալների շտեմարան և կատարված վերլուծության հիման վրա մշակել մասնաճյուղի գիտական հենքի փուլային բարելավման և արդիականացման 2018-2022թթ. հեռանկարային պլան:
- Ապահովել գիտական ու նորարարական հետազոտությունների համար անհրաժեշտ արդյունավետ և արդիական տեղեկատվական հենք:
- Մասնաճյուղի դասախոսներին և ուսանողներին առավելագույնս ներգրավել ամբիոնների հետազոտական աշխատանքներում:
- Աշխատանքներ տանել Ճարտարագիտական լաբորատորիայի հիմքի վրա գիտական հետազոտությունների փորձարարական բազա ստեղծելու ուղղությամբ:
- Ապահովել մասնաճյուղի մասնակցությունը ֆինանսավորվող գիտահետազոտական նախագծերի (պետքուջետային թեմատիկ, բազային լաբորատորիաների և այլն) ու դրամաշնորհների մրցույթներին:

ԽՆԴԻԸ 3.3. Արդյունավետ օգտագործել գիտական հետազոտությունների ինովացիոն կողմնորոշման համար համալսարանում ստեղծված ենթակառուցվածքները, ապահովել նորաստեղծությանն ուղղված մասնաճյուղ-արդյունաբերություն հետազոտական համագործակցության զարգացումը:

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները.

- Ակտիվացնել հետազոտական կապերը գործընկեր ձեռնարկությունների, մասնավորապես ՁՊՄԿ-ի, ԿԼՀԿ-ի, ԱՊՄԿ-ի հետ:
- Նպաստել մասնաճյուղ-արդյունաբերություն հետազոտական համագործակցության համակողմանի զարգացմանը:

ԽՆԴԻԸ 3.4. Ապահովել գիտական հետազոտությունների արդյունքների պատշաճ հրապարակայնացումը, դրանց առևտրայնացմանն ուղղված մարքետինգային միջոցառումների իրականացումը:

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները.

- Կազմակերպել մասնաճյուղում կատարվող հետազոտությունների պատշաճ քննարկումը ամբիոնների սեմինարներներում ու ներկայացումը գիտաժողովներում՝ նպաստելով հետազոտությունների հրապարակայնացմանն ու նպաստել ստացված արդյունքների առևտրայնացմանը:
- Խրախուսել գիտական հոդվածների հրատարակումը միջազգային բարձր վարկանիշ և ազդեցության գործակից ունեցող միջազգային հեղինակավոր պարբերականներում:
- Նպաստել գիտական հանդեսներում և ժողովածուներում անգլալեզու գիտական հրապարակումների ծավալի ավելացմանը:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ (հինգ տարվա կտրվածքով).

- Մասնաճյուղի գիտահետազոտական աշխատանքներում ու ինովացիոն նախագծերում պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավվածություն՝
 - ֆինանսավորվող նախագծեր՝ առնվազն 5%,

- հետազոտական աշխատանքներ՝ առնվազն 30%:
- Մասնաճյուղի գիտական աշխատանքներում ու ինովացիոն նախագծերում ուսանողների ներգրավվածություն՝
 - ասպիրանտներ, հայցորդներ՝ 50%,
 - բակալավրիատի ուսանողներ՝ առնվազն 2%:
- Ասպիրանտուրան հաջողությամբ ավարտած և թեկնածուական ատենախոսությունը պաշտպանած մասնագետներով համալսարանի պրոֆեսորադասախոսական ու հետազոտական կազմի համալրման ցուցանիշ՝ առնվազն 20%:
- Մասնաճյուղում ներդրված դասախոսների գործունեության գիտական բաղադրիչի արդյունավետության գնահատման ներհամալսարանական չափանիշներ:
- Մեկ դասախոսին ընկնող հրապարակված գիտական աշխատանքների թիվը 5 տարում՝ առնվազն 2:

**ՆՊԱՏԱԿ 4. ՈՐԱԿՅԱԼ ԿԱՂՐԱՅԻՆ ՆԵՐՈՒԺ, ՆՈՐԱՑՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԿԱՆ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐ ԵՎ
ՁԵՎԱՎՈՐՎՈՂ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ՄԻԶԱՎԱՅՐ**

Որակյալ դասախոսական կազմի ձևավորումը, ինչը ուսուցման որակի ապահովման կարևոր նախադրյալն է, եղել և մնում է մասնաճյուղի կարևորագույն հիմնահարցերից մեկը, որի լուծումն էապես կախված է աշխատանքային միջավայրի բարելավումից և դասախոսական կազմի համար կայուն սոցիալական երաշխիքների առկայությունից: Դասախոսական կազմի համալրումը, դասավանդման արդյունավետության բարձրացումը, նրա մասնագիտական կատարելագործման և առաջընթացի ապահովումը, դասախոսական հաստիքների օգտագործման արդյունավետության բարձրացումը մոտակա տարիներին շարունակելու են հանդիսանալ մասնաճյուղի ստրատեգիական թիրախները:

Մասնաճյուղի կառավարման համակարգի արդյունավետության և ծառայությունների որակի բարձրացումը անհրաժեշտաբար պահանջում է բարելավել մասնաճյուղի կազմակերպական կառուցվածքը, ապահովել վարչական և դասախոսական հաստիքների օգտագործման արդյունավետության բարձրացումը, հաստիքախնայողական քաղաքականության վարումը:

Մասնաճյուղի արդյունավետ գործունեության և հետագա զարգացման նախապայմաններն են որակյալ վարչակազմի առկայությունը, կառավարման համակարգի արդյունավետության և վարչական ծառայությունների որակի բարձրացումը, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի, փոխադարձ հարգանքի և վստահության վրա հիմնված ուսանող-դասախոս աշխատանքային փոխհարաբերությունների, ուսանողական ինքնավարության, որոշումների ընդունման կոլեգիալության ապահովումը, կոլեկտիվ պատասխանատվության զգացման սերմանումը: Այս նախապայմանների առկայությունը կապահովի նաև մասնաճյուղում կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը և բացասական երևույթների ցանկացած դրսևորման դեմ անհանդուրժողական մթնոլորտի ձևավորումը: Մասնաճյուղի ռազմավարական խնդիրների լուծումը պահանջում է զարգացնել ուսանողական ինքնավարությունը՝ կարևորելով ուսանողների և ուսանողական կառույցների դերակատարությունը պրոֆեսորադասախոսական անձնակազմի գործունեության արդյունավետության գնահատման և մասնաճյուղային այլ գործընթացների թափանցիկության ու հրապարակայնության ապահովման գործում:

ԽՆԴԻՐ 4.1. Բարելավել և համալրել մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմը՝ տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին և կրթության որակի արդիական չափանիշներին համահունչ:

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները.

- Մասնաճյուղի դասախոսական կազմի համալրման նպատակով արդյունավետ օգտագործել համալսարանի և այլ բուհերի ասպիրանտուրան ու հայցորդական ինստիտուտը: Ասպիրանտուրայում սովորող մասնաճյուղի շրջանավարտներին

ներգրավել ուսումնական գործընթացում և հնարավորության դեպքում կազմակերպել նրանց արտադրական փորձառությունը տարածաշրջանի գործատու ձեռնարկություններում:

- Դասախոսական կազմի բոլոր տարակարգերի համար ապահովել համալսարանում ընդունված աշխատավարձի կայուն մակարդակներ:
- Դասախոսների գիտամանկավարժական գործունեության գնահատման ներհամալսարանական համակարգի կիրառությամբ իրականացնել գնահատման ամենամյա գործընթաց՝ հիմք ընդունելով դրա արդյունքները միջտարակարգային առաջքաշման և աշխատավարձի բարձրացման համար:
- Օգտագործել համալսարանի ՇԿ և ԴՎԿ-ն ու տարածաշրջանի գործատու ձեռնարկությունների արտադրական բազան մասնաճյուղի դասախոսական կազմի որակի բարելավման և արտադրական փորձառության ձեռք բերման նպատակով՝ համարելով դասախոսների մասնակցությունը ՇԿ և ԴՎԿ-ի, արտադրական փորձառության ծրագրերին՝ որպես միջտարակարգային առաջքաշման կարևոր պայման:

ԽՆԴԻԴ 4.2. Բարելավել մասնաճյուղի կազմակերպական կառուցվածքը:

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները.

- Ուսումնասիրել Համալսարանի արդեն առկա ինստիտուտային կառույցների ձևավորման հաջող փորձը և դրանից ելնելով մշակել ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի նոր կառուցվածքը, նախապատրաստել և իրականացնել բնականոն անցման գործընթաց:
- Կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մասնաճյուղի նոր կառուցվածքին համապատասխան սահմանել գործառույթների հստակ շրջանակներ, որոշումների ընդունման ու կատարման հստակ համակարգ:
- Արդյունավետորեն կիրառել Համալսարանի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) համակարգը, դարձնելով այն մասնաճյուղի տարեկան գործունեության հաշվետվական վերլուծությունների հիմնական ուղղորդիչը:
- Ապահովել մասնաճյուղի կառավարման իրավական-նորմատիվային բազայի շարունակական զարգացումը՝ կազմակերպական փոփոխություններին համահունչ:

ԽՆԴԻԴ 4.3. Լավարկել հաստիքացուցակների ձևավորման գործընթացը, բարձրացնել հաստիքների օգտագործման արդյունավետությունը և ապահովել վարչակազմի որակի շարունակական բարձրացումը:

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները.

- Ապահովել օպտիմալ հարաբերակցություններ ուսանողների, վարչատնտեսական, ուսումնասովանողական և դասախոսական կազմերի թվաքանակների միջև, բարելավել հաստիքացուցակների ձևավորման գործընթացը և բարձրացնել հաստիքների օգտագործման արդյունավետությունը:

- Բարձրացնել դասախոսական հաստիքների օգտագործման արդյունավետությունը՝ դասընթացների միասնականացման և ուսանողական հոսքերի խոշորացման միջոցով:
- Արդյունավետ օգտագործել խրախուսման ֆոնդի միջոցները մասնաճյուղի դասախոսական կազմին և այլ աշխատողներին ըստ գործունեության արդյունքների խրախուսելու համար:
- Ապահովել մասնաճյուղի մասնակցությունը Համալսարանում կազմակերպվող վարչակազմի կատարելագործման դասընթացներին՝ կառավարման նոր մեթոդների յուրացման և ներդրման նպատակով:
- Խրախուսել դասախոսական կազմի մասնակցությունը մասնաճյուղի կառավարման և որոշումների ընդունման գործընթացներում:

ԽՆԴԻԴ 4.4. Նպաստել ներմասնաճյուղային մշակույթի և կոլեգիալ միջավայրի ձևավորմանը, ապահովել անհրաժեշտ պայմաններ մասնաճյուղում պոլիտեխնիկական ավանդույթների ներդրման ու մնայուն արժեքների պահպանման համար:

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները.

- Նպաստել մասնաճյուղի շահերի և կոլեկտիվ պատասխանատվության, համալսարանական համայնքին պատկանելիության գիտակցման արմատավորմանը, պոլիտեխնիկական լավագույն ավանդույթների և մնայուն արժեքների պահպանմանն ու բարեվարքության պոլիտեխնիկական ավանդույթների զարգացմանը:
- Ապահովել մասնաճյուղի և նրա ստորաբաժանումների կառավարման գործընթացներում կոլեգիալ կառավարման անհրաժեշտ նախապայմաններ:
- Ապահովել որոշումների ընդունման թափանցիկությունը, ազատ բանավեճի, այլակարծության հնարավորությունները և տեղեկատվության տարածումը մասնաճյուղում՝ այդ նպատակով օգտագործելով ներմասնաճյուղային հաղորդակցության ցանցը:
- Ապահովել մասնաճյուղի վարչակազմի, ուսանողական խորհրդի և արհեստակցական կազմակերպության ներդաշնակ համագործակցությունը:
- Ստեղծել էթիկայի հանձնաժողով՝ անձնական մոտիվացիա ունեցող գործողություններից աշխատակիցների պաշտպանվածության ապահովման, բախումնային իրավիճակների քննարկման և մասնաճյուղում համերաշխության մթնոլորտի պահպանման նպատակով:
- Նպաստել մասնաճյուղում ներհամալսարանական կուլտուրայի, մշակութային և սպորտային միջոցառումների հետագա զարգացմանը (ՀԱՊՀ-ի և մասնաճյուղի տարեդարձ, շրջանավարտության ու Ամանորյա հանդիսություններ և այլն):

ԽՆԴԻԴ 4.5. Ապահովել անհրաժեշտ պայմաններ մասնաճյուղում բարոյահոգեբանական պատշաճ մթնոլորտի ձևավորման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցման համար:

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները.

- Ստեղծել նպաստավոր պայմաններ և մթնոլորտ մասնաճյուղում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման համար, մասնավորապես, վերականգնել առկա-հեռակա ուսուցման ձևը,

պահպանել միջանկյալ և ամփոփիչ քննությունների ընդունման սահմանված կարգը, բարձրացնել կիրառվող գնահատման համակարգին, չափանիշներին և ընթացակարգին ուսանողների իրազեկվածության աստիճանը, հնարավորինս քոմփյութերացնել գիտելիքների գնահատման գործընթացը:

- Ապահովել մասնաճյուղում կոռուպցիոն երևույթների վերաբերյալ հավաստի տեղեկատվության հաղորդման հնարավորություններ՝ օգտագործելով սոցիոլոգիական հարցումները և մատչելի այլ ձևեր (էլեկտրոնային փոստ, վստահության էջ մասնաճյուղի կայքում, ֆեյսբուքյան էջ և այլն), հակակոռուպցիոն միջոցառումներում հնարավորինս բարձրացնել ուսանողական խորհրդի դերը:

ԽՆԴԻԸ 4.6. *Զարգացնել և ընդլայնել ուսանողական ինքնավարությունը:*

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները.

- Ապահովել ուսանողների ակտիվ մասնակցությունը մասնաճյուղի կառավարման գործընթացներում:
- Իրականացնել մասնաճյուղում կատարվող գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների մասնակցությունը խթանող քաղաքականություն:
- Հնարավորինս նպաստել մասնաճյուղի ուսանողական խորհրդի արտաքին կապերի զարգացմանը, խրախուսել ուսանողների ներգրավումը միջազգային ուսանողական ծրագրերում:
- Աջակցել մասնաճյուղի ուսանողական խորհրդի կողմից հայրենասիրության ոգով դաստիարակման և պոլիտեխնիկական լավագույն ավանդույթների ամրապնդման նպատակով կազմակերպվող միջոցառումներին:
- Ապահովել մասնաճյուղի ուսանողական խորհրդի ակտիվ դերակատարությունը բարեվարքության նորմերի արմատավորման և հակակոռուպցիոն միջավայրի ձևավորման հարցերում:
- Կարևորել ուսանողների և ուսխորհրդի դերակատարությունը դասախոսների գործունեության գնահատման և մասնաճյուղային այլ գործընթացների թափանցիկության ու հրապարակայնության ապահովման գործում:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ (հինգ տարվա կտրվածքով).

- Մրցութային կարգով ձևավորված պրոֆեսորադասախոսական կազմի հաշվեկշիռը հիմնական դասախոսական կազմում՝ առնվազն 30%:
- Գիտական աստիճաններ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի հաշվեկշիռը՝ առնվազն 51%:
- Պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետության գնահատման կատարելագործված ռեյթինգային գործող համակարգի ներմուծում՝ 2019-2020 թթ:

- Պրոֆեսորադասախոսական կազմի միջին տարիքի նվազեցում 2022 թվին 2017թ-ի համեմատ՝ առնվազն 5%-ով:
- Վերապատրաստման դասընթացներում ընդգրկված հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի հաշվեկշիռը՝ 50%:
- Ուսանող/դասախոս, ուսանող/աշխատող քանակական հարաբերակցությունների հնարավորինս մոտեցում համահամալսարանական միջին ցուցանիշին:

ԼՊԱՏԱԿ 5. ԱՊԱՀՈՎԵԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Մասնաճյուղի բնականոն գործունեության և հետագա զարգացման հիմնական ֆինանսական աղբյուրը արտաբյուջետային միջոցներն են, որոնց ծավալի շուրջ 95%-ը կազմում են վճարովի ուսուցումից ձևավորվող արտաբյուջետային մուտքերը: Հաշվի առնելով ժողովրդագրական և միջավայրային այլ անցանկալի փոփոխություններով պայմանավորված դիմորդների հոսքի նվազման հանգամանքը՝ մասնաճյուղի կարևորագույն ստրատեգիական նպատակներից են նրա ֆինանսական կայունության ապահովումը, ռեսուրսների արդյունավետ կառավարումը և ռեսուրսախնայողության քաղաքականության հետևողական իրականացումը: Նշված նպատակից բխող առաջնահերթ խնդիրը մասնաճյուղի կայունացման ֆոնդի ապահովումն է, որը 2012 թ. կազմել էր ընդհանուր եկամուտների 30,31%, իսկ 2016թ.-ին՝ 20,56%-ը:

Մասնաճյուղի ֆինանսական կայունության ապահովման հնարավոր ուղիներից է վճարովի ուսուցման ծառայությունից բացի գիտական և գիտատեխնիկական ծրագրերի, ՀՀ օրենսդրությամբ չարգելված և մասնաճյուղի կանոնադրությամբ սահմանված ձեռնարկատիրական գործունեության իրականացումը:

ԽՆԴԻՐ 5.1. Ապահովել արտաբյուջետային միջոցների կայուն աճ՝ ստրատեգիական պլանով նախանշված մասնաճյուղի զարգացման կարիքներին համապատասխան :

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները.

- Իրականացնել տարեկան բյուջեի պլանավորումը՝ հիմնվելով մշակված հաշվեկշռված բյուջետային ցուցանիշների վրա:
- Կատարելագործել մասնաճյուղի բյուջետային համակարգը՝ ապահովելով ֆինանսական ռեսուրսների արդյունավետ ու թափանցիկ բաշխումը և մասնաճյուղի գործունեության բոլոր բնագավառների համաձայնեցված կառավարումը:
- Ստրատեգիական պլանի իրականացման ֆինանսական ցուցանիշների գնահատման հիման վրա նախատեսել մասնաճյուղի 2018-2022թթ. ստրատեգիական զարգացման բյուջեն (ֆինանսական կողմնորոշիչ ցուցանիշները):
- Ապահովել մասնաճյուղի ֆինանսական կայունացման ռիսկերից ապահովագրման ֆոնդի հնարավորինս բարձր ծավալ՝ չեզոքացնելու համար արտաքին միջավայրային անցանկալի փոփոխությունների ֆինանսական հետևանքները:

ԽՆԴԻՐ 5.2. Բազմազանեցնել ու մեծացնել մասնաճյուղի ֆինանսական միջոցների ներհոսքը՝ ընդլայնելով արտաբյուջետային մուտքերը:

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները.

- Վերականգնել Սյունիքի մարզի լեռնահանքային արդյունաբերության ոլորտի ձեռնարկությունների աշխատողների վերապատրաստման և որակավորման բարձրացման կանոնավոր գործող վճարովի դասընթացները:

- Օգտագործելով «ԶՊՄԿ» ՓԲ ընկերության պատվերով տնտեսականագրային հետազոտական նախագծի կատարման հաջողված փորձը՝ շարունակել իրականացնել գիտահետազոտական այլ նախագծեր «ԶՊՄԿ» ՓԲ, «ԱՊՄԿ» ՓԲ և «ԿԼՀԿ» ՓԲ ընկերությունների պատվերով:
- Նպաստել մասնաճյուղում պետբյուջետային ֆինանսավորմամբ գիտահետազոտական ծրագրերի կատարմանը և ենթակառուցվածքների (բազային լաբորատորիաների և այլն) ստեղծմանը:
- Աշխատանքներ տանել գործատուների կողմից բարեգործական միջոցների, նվիրատվությունների ներգրավման ուղղությամբ՝ օգտագործելով նաև մասնաճյուղի շրջանավարտների հնարավորությունները:
- Ընդլայնել մասնաճյուղի շարունակական և լրացուցիչ կրթության համակարգի շրջանակում տարածաշրջանի բնակչությանը մատուցվող ծառայությունների ցանկը և մեծացնել դրանց եկամտաբերությունը:

ԽՆԴԻՐ 5.3. Ապահովել մասնաճյուղի ֆինանսական ռեսուրսների կառավարման և դրանց օգտագործման արդյունավետության բարձրացումը:

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները.

- Բարձրացնել մասնաճյուղի ֆինանսական ռեսուրսների կառավարման արդյունավետությունը՝ նորմատիվային բազայի զարգացման, կառավարման տեղեկատվական համակարգերի լայն ներդրման և աշխատողների վերապատրաստման միջոցով:
- Ապահովել ֆինանսական և նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատման համալսարանում գործող համակարգի կիրառումը և կատարելագործել նյութական արժեքների հաշվառման գործընթացը:
- Ներդնել ֆինանսական և նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատման ներհամալսարանական համակարգը:
- Իրականացնել ռեսուրսախնայողությանն ուղղված միջոցառումներ (բազմասակագնային էլ. հաշվիչների տեղադրում, ջրի կորուստների վերացում, ջերմամեկուսացում, գազաֆիկացված ջեռուցման օպտիմալ կազմակերպում, գործուղման և տրանսպորտային ծախսերի օպտիմալացում, գրասենյակային ապրանքների, թղթի և այլ նյութերի ծախսի ճշգրիտ հաշվառում և այլն):
- Իրականացնել վարչատնտեսական հաստիքների ռացիոնալ պլանավորում՝ բարձրացնելով դրանց օգտագործման արդյունավետությունը և կիրառել աշխատողների նյութական խրախուսման միջոցներ՝ ըստ գործունեության վերջնարդյունքների:
- Իրականացնել մասնաճյուղի աշխատակիցների առողջության կամավոր ապահովագրության ծրագիր՝ մասնակի ներդրում կատարելով մասնաճյուղի արտաբյուջետային միջոցներից:
- Ապահովել մասնաճյուղի աշխատողների սոցիալական օգնության ֆոնդի և խրախուսման ֆոնդի արդյունավետ ու նպատակային օգտագործումը:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ (հինգ տարվա կտրվածքով).

- Արտաբյուջետային մուտքերի աճը 2017թ. նկատմամբ՝ առնվազն 5%:
- Բարեգործական միջոցների, նվիրատվությունների ծավալը (այդ թվում՝ ապրանքանյութական արժեքների տեսքով)՝ բյուջեի 3%:
- Կայունացման ֆոնդի հաշվեկշիռը բյուջեում՝ առնվազն 15%:
- Զարգացմանն ուղղվող միջոցների հաշվեկշիռը՝ առնվազն 5%:
- Ինֆրակառուցվածքի պահպանմանն ուղղվող միջոցների հաշվեկշիռը՝ առնվազն 7%:
- Աշխատավարձի ֆոնդի աճ՝ առնվազն 10%-ի չափով:
- Աշխատողների սոցիալական օգնության ֆոնդի հաշվեկշիռը բյուջեում՝ առնվազն 1%:
- Աշխատողների խրախուսման ֆոնդի հաշվեկշիռը բյուջեում՝ առնվազն 1,5%:
- Մասնաճյուղի հիմնական հաստիքային կազմի (պրոֆեսորադասախոսական, ուսումնասօժանդակ, վարչական, սպասարկող) աշխատավարձի ֆոնդում վարչական ծախսերի մասնաբաժինը՝ ոչ ավել քան 25% :
- Ուսանողներին հատկացվող ֆինանսական օգնության (ներառյալ ուսման վարձերի զեղչերը)՝ համալսարանի վճարովի ուսուցումից արտաբյուջետային մուտքերի հարաբերությունը՝ 1/10:

**ԼՊԱՏԱԿ 6. ԱՊԱՀՈՎԵԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԵՎ
ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԻՆ ՀԱՄԱՀՈՒՆՉ**

Մասնաճյուղում պատշաճ մակարդակով կրթական և հետազոտական ծրագրերի իրականացման անհրաժեշտ նախադրյալը զարգացած նյութատեխնիկական բազայի առկայությունն է: Նախկին ճարտարագիտատնտեսագիտական քոլեջից մասնաճյուղին ժառանգված անմխիթար վիճակում գտնվող մասնաշենքերի մի մասը «ԶՊՄԿ» ՓԲ ու «Հայջրմուղկոյուղի» ՓԲ ընկերությունների, «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի աջակցությամբ ու սեփական միջոցներով փուլային կարգով հիմնանորոգվել է՝ ստանալով ժամանակակից բուհի կառույցներին վայել տեսք:

Սակայն դեռևս հիմնանորոգման կարիք ունեն մարզադահլիճը, երրորդ ուսումնական մասնաշենքի մի մասը: Լուրջ հիմնանորոգման կարիք ունի նախկին հանրակացարանի մասնաշենքը, որը նախատեսվում է տրամադրել տարածաշրջանային տեխնոպարկ ստեղծելու համար և երկրորդ ուսումնական մասնաշենքը, որի մի մասը հիմնանորոգվել կամ վերանորոգվել է սեփական միջոցներով (միջոցառումների դահլիճ, «Ճարտարագիտական լաբորատորիա»-ի, «Հեռաուսուցման լսարան»-ի, «Ընդերքաբանության» լաբորատորիայի համար հատկացած սենյակները, 1 վարչական սենյակ, երկրորդ հարկի միջանցքը):

Առաջնահերթ արդիականացման կարիք ունեն ֆիզիկայի, քիմիայի, էլեկտրատեխնիկայի ուսումնագիտական լաբորատորիաները, որոնք պետք է համալրվեն նոր ուսումնական գույքով և ժամանակակից լաբորատոր սարքավորումներով:

Մասնաճյուղի նյութատեխնիկական բազայի կատարելագործման հետ մեկտեղ անհրաժեշտ է նաև աշխատողների և ուսանողների սոցիալական կարիքների բավարարման նպատակով շարունակաբար բարելավել ուսումնական և աշխատանքային պայմանները, զարգացնել սոցիալական ծրագրերը:

ԽՆԴԻՐ 6.1. Բարելավել մասնաճյուղում ուսումնական գործընթացի և հետազոտական աշխատանքների իրականացման նյութատեխնիկական պայմանները:

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները.

- Բարձրացնել ուսումնական և օժանդակ տարածքների օգտագործման արդյունավետությունը՝ վերաբաշխելով տարածքները մասնաճյուղի նոր կառուցվածքի պահանջներին համապատասխան:
- Բարելավել լսարանային ֆոնդի տեխնիկական վիճակը և այն հնարավորինս հազեցնել ժամանակակից գույքով և սարքավորումներով:
- Մասնաճյուղում ստեղծել ժամանակակից հեռախոսակապի ներքին ցանց:
- Իրականացնել մասնաճյուղի գրադարանային ռեսուրսների վիճակի ուսումնասիրությունը և համալրել գրադարանային ֆոնդը արդիական մասնագիտական գրականությամբ:

ԽՆԴԻԴ 6.2. Ապահովել մասնաճյուղում ուսումնական գործունեության իրականացման միասնական նյութատեխնիկական չափորոշիչ պահանջները բավարարող տարածքային, ենթակառուցվածքային պայմանները:

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները.

- Մշակել մասնաճյուղի նյութատեխնիկական հենքի զարգացման, մասնավորապես, մասնաշենքերի և ենթակառուցվածքների պարբերական վերանորոգման, ուսումնագիտական լաբորատոր բազայի արդիականացման հեռանկարային (հնգամյա) պլան և փուլային կարգով իրականացնել այն՝ օգտագործելով նաև գործընկեր և դոնոր կազմակերպությունների հնարավորությունները:
- Կազմել մարզադահլիճի, հարակից մարզահրապարակի և ուսումնական երկրորդ մասնաշենքի հիմնանորոգման փուլային ծրագիր ու գտնել դոնորներ այն իրականացնելու համար:
- Աշխատանքներ տանել «Քրոնիմետ» հիմնադրամի աջակցությամբ երրորդ ուսումնական մասնաշենքի հիմնանորոգումն ավարտին հասցնելու ուղղությամբ:
- Տեխնոպարկի ստեղծման նպատակով տրամադրել հանրակացարանի մասնաշենքը և չորրորդ հարկի մի մասը վերակառուցել արդիական չափանիշներին համապատասխանող հանրակացարանի՝ ոչ կապանաբնակ ուսանողների և մասնաճյուղի հյուրերի համար:

ԽՆԴԻԴ 6.3. *Զարգացնել մասնաճյուղի սոցիալական ծրագրերը՝ ապահովելով աշխատակիցների սոցիալական բավարարվածության պատշաճ մակարդակ:*

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները.

- Շարունակաբար բարելավել աշխատակիցների սոցիալական վիճակը՝ մասնաճյուղի բյուջեում նախատեսել սոցիալական ծրագրերին և միջոցառումներին հատկացումների շարունակական ավելացում:
- Ստեղծել բավարար պայմաններ մասնաճյուղի ուսանողներին և աշխատողներին որակյալ արագ սննդով ապահովելու համար:
- Նպաստել մասնաճյուղում մշակութային և մարզական ծրագրերի զարգացմանը, ապահովել ուսանողների և աշխատողների գործունե մասնակցությունը մասնաճյուղային, քաղաքային ու մարզային հասարակական միջոցառումներին:
- Մասնաճյուղի մասնաշենքերում ապահովել անհրաժեշտ պայմաններ (էլեկտրա-ջրամատակարարում, ջեռուցում և այլն) բնականոն գործունեության համար՝ պահպանելով կենսագործունեության անվտանգության և բնապահպանական չափորոշիչները:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ (հինգ տարվա կտրվածքով).

- Մասնաճյուղի մասնաշենքերի հիմնանորոգման, վերանորոգման և վերակառուցման հեռանկարային և տարեկան պլանների առկայություն և կատարողական:

- Մասնաճյուղի նյութատեխնիկական բազայի զարգացման հեռանկարային և տարեկան պլանների առկայություն և կատարողական:
- Մեկ ուսանողին ընկնող ուսումնական մակերեսը մասնաճյուղում՝ ոչ պակաս պետական չափորոշիչով սահմանված 8 ք.մ-ից (հնգամյակի վերջում):
- Մասնաշենքերի հիմնանորոգման և վերակառուցման ծախսերի հաշվեկշիռը մասնաճյուղի տարեկան բյուջեում՝ 5%:
- Սոցիալական ծրագրերին ուղղվող հատկացումների հաշվեկշռի աճ մասնաճյուղի արտաբյուջեում՝ առնվազն 2% (հնգամյակի վերջում):
- Կապիտալ շինարարության պլանային հատկացումները հնգամյակում՝ ոչ պակաս 3%:
- Շահագործման հանձնված ժամանակակից ներքին հեռախոսային ցանց՝ 2020թ.:
- Աշխատողների սոցիալական բավարարվածության մակարդակի բարձրացում (ըստ հարցումների):

**ԼՊԱՏԱԿ 7. ԱՊԱՀՈՎԵԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ
ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ
ՀԱՄԱՀՈՒՆՉ**

Մասնաճյուղի կողմից մատուցվող կրթական և գիտական ծառայությունների որակը էապես կախված է մասնաճյուղի տեղեկատվական ռեսուրսների զարգացման մակարդակից և գիտակրթական ծրագրերում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության արդյունավետությունից: Ուստի տեղեկատվական ռեսուրսների առաջանցիկ զարգացման ապահովումը և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության շրջանակների ընդլայնումը՝ ներառյալ գիտակրթական ծրագրերը և մասնաճյուղի կառավարման ոլորտը, մասնաճյուղի կարևորագույն խնդիրներն են:

Մասնաճյուղում գիտական աստիճան ունեցող դասախոսական կազմի սակավաթվության պարագայում հույժ կարևորություն է ձեռք բերում էլեկտրոնային, մասնավորապես, հեռավար (online) ուսուցման արդիական միջոցների ներդրումը, որոնց կիրառությունը ուսուցման ճկունության, գիտելիքների հստակ գնահատման, բարձր մակարդակով նորագույն դասընթացների դասավանդման և հասանելիության ապահովման հետ մեկտեղ, թույլ է տալիս զգալիորեն նվազեցնել ուսումնական ծախսերը՝ բարձրացնելով ուսուցման որակը: Հատկապես արդյունավետ է մասնաճյուղում հեռավար լաբորատորիայի ներդրումը և առաջավոր բուհերի օնլայն լաբորատորիաների օգտագործումը ուսանողների գործնական հմտությունների ձեռք բերման և կարողությունների զարգացման համար: Այս տեսակետից հույժ կարևորվում է մասնաճյուղում (մասնաճյուղի ուսումնական գործընթացում) Տեմպուս միջազգային նախագծի շրջանակում Իլմենաուի տեխնոլոգիական համալսարանի (Գերմանիա) մշակած GOLDI հեռավար հիբրիդային լաբորատորիայի ներդրումը և լայն կիրառության ապահովումը:

Մյուս կողմից, մասնաճյուղը, որպես Հայաստանի առաջատար տեխնոլոգիական բուհի մաս, կոչված է դառնալու մարզային ռեսուրսային կենտրոն՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական կիրառությունների ոլորտում:

ԽՆԴԻՐ 7.1. Ապահովել մասնաճյուղի ինֆորմացիոն ռեսուրսների հետագա զարգացումը և տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառությունը մասնաճյուղի գործունեության բոլոր բնագավառներում:

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները.

- Ընդլայնել և զարգացնել մասնաճյուղի ներքին տեղեկատվական ցանցը՝ օգտագործելով անլար կապի տեխնիկական հնարավորությունները:
- Ստեղծել տեխնոլոգիական կարողությամբ և հեռաուսուցման նոր լսարաններ, վիրտուալ ու հեռավար լաբորատորիաներ:
- Խթանել և խրախուսել մասնաճյուղի ուսումնական գործընթացում էլեկտրոնային դասընթացների ներդրումը և մասնաճյուղում նման դասընթացների մշակումը:

- Իրականացնել մասնաճյուղի աշխատակիցների վարժանքներ՝ Համալսարանի միասնական տեղեկատվական համակարգից և այլ ինֆորմացիոն ռեսուրսներից օգտվելու կարողություններ ձևավորելու նպատակով:
- Ապահովել մասնաճյուղի ներքին ցանցի հետ Համալսարանի հուսալի աշխատանքի անհրաժեշտ պայմաններ:

ԽՆԴԻԳ 7.2. Ապահովել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառումը մասնաճյուղի ուսումնական և գիտահետազոտական գործընթացներում:

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները.

- Ապահովել մասնաճյուղում իրականացված 530278-TEMPUS-1-2012-1-DE-TEMPUS-JPHES միջազգային նախագծի մասնակից բուհերի հեռավար լաբորատորիաների վիրտուալ ռեսուրսների օգտագործումը մասնաճյուղի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի գիտակրթական ծրագրերում:
- Ընդլայնել մասնաճյուղում ներդրված էլեկտրոնային ուսուցման կառավարման Moodle համակարգը և կազմակերպել դասախոսների և ուսանողների վարժանքներ այդ համակարգի օգտագործման համար:
- Ապահովել մասնաճյուղի դասախոսների կողմից մշակված դասագրքերի, ուսումնական ձեռնարկների ու այլ ուսումնամեթոդական գրականության էլեկտրոնային տարբերակների տեղադրումը մասնաճյուղի Moodle համակարգում և խթանել այդ համակարգի կիրառությամբ ուսումնառության կազմակերպումը:
- Ապահովել Համալսարանի նորաստեղծ «Տեխնոլոգիական ինովացիոն հարթակի» և այլ ինֆորմացիոն ռեսուրսների արդյունավետ կիրառումը մասնաճյուղի գիտահետազոտական և կրթական գործընթացներում:
- Ապահովել ներքին ինֆորմացիոն ցանցի պաշտպանվածությունը, էլեկտրոնային գրադարաններից օգտվելու մատչելիությունը՝ օգտագործելով համացանցի հնարավորությունները:

ԽՆԴԻԳ 7.3. Աշխատանքներ տանել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության ոլորտում մարզային ուսումնահետազոտական կենտրոն դառնալու նպատակով:

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները.

- Նպաստել Սյունիքի մարզում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանը՝ ապահովելով հետազոտական և կրթական ծառայություններ, օգտագործելով մասնաճյուղի գիտական ներուժը և միջազգային համագործակցության շրջանակում ձևավորված հնարավորությունները:
- Ապահովել մասնաճյուղի համագործակցությունը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական և ոչ պետական կառույցների, հիմնադրամների հետ հանրությանը մատուցվող ծառայությունների ընդլայնման և բազմազանեցման նպատակով:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ (հինգ տարվա կտրվածքով).

- Տեխնոլոգիական կարողությամբ և հեռուստուցման լսարանների թվի աճ՝ 20-25%:
- Ուսումնական գործընթացում էլեկտրոնային ռեսուրսների օգտագործմամբ դասընթացների հաշվեկշիռը՝ առնվազն 40-50%:
- Դասավանդման գործընթացում էլեկտրոնային տեխնոլոգիաներ կիրառող հիմնական դասախոսների հաշվեկշիռը՝ առնվազն 50%:
- Մասնաճյուղի ուսումնական գործընթացում ներդրված GOLDI հեռավար լաբորատորիա:
- Ուսանողների տարեկան միջին թվի հարաբերությունը ուսումնական նպատակներով օգտագործվող համակարգիչների թվին՝ ոչ ավելին քան 7:
- Վարչական կառավարման և տեղեկատվության ապահովման գործող ներմասնաճյուղային միասնական էլեկտրոնային համակարգ՝ 2020թ.:

ԱՊԱՏԱԿ 8. ԱՊԱՀՈՎԵԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ, ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ ՄԻԶԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

Մասնաճյուղը ստեղծվել է գլխավորապես Սյունիքի մարզի գիտակրթական կարիքների բավարարման համար, ուստի նրա արգասաբեր գործունեության և կայուն զարգացման գլխավոր երաշխիքը տարածաշրջանի արդյունաբերական ձեռնարկությունների, գործարար կառույցների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու հասարակության հետ կապերի ընդլայնումը և համակողմանի զարգացումն է: Միաժամանակ, մասնաճյուղը պարտավոր է գործուն մասնակցություն ունենալ Սյունիքի մարզի գիտահետազոտության զարգացման հեռանկարային գիտատեխնիկական նախագծերի իրականացմանը, տնտեսության առջև ծառայած տեխնոլոգիական և արտադրական խնդիրների լուծմանը, արդյունաբերական ձեռնարկությունների հետ փոխշահավետ կոմերցիոն կապերի ստեղծմանը և ընդլայնմանը:

Հաշվի առնելով Բոլոնիայի գործընթացի Հայաստանյան զարգացումներում ՀԱՊՀ-ի առաջատար դերը, մասնաճյուղը, որպես ՀԱՊՀ-ի ստորաբաժանում, պարտավոր է միջազգայնացնել իր գործունեությունը համալսարանի միջազգային համագործակցության ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև, ելնելով մասնաճյուղի կողմից Տեմպուս նախագծի ինքնուրույնաբար կատարման հաջողված փորձից՝ աշխատանքներ տանել նախագծի մասնակից բուհերի հետ համագործակցությունը շարունակելու և նոր միջազգային ծրագրերում ընդգրկվելու համար:

Ելնելով ՀԱՊՀ-ի զարգացման առանցքային ուղղությունների շարքում համակողմանի միջազգայնացման կարևորությունից՝ ինչը բարձրագույն կրթության զարգացման արդի միտումներից է, մասնաճյուղի միջազգային հեղինակության բարձրացման նպատակով անհրաժեշտ է ապահովել նրա մասնակցությունը Համալսարանում իրականացվող միջազգային ծրագրերին, հողվածների հրապարակումն արտասահմանյան բարձր վարկանիշ ունեցող գիտական հանդեսներում և մասնակցությունը միջազգային ներկայացուցչական գիտաժողովներին:

ԽՆԴԻՐ 8.1. Ընդլայնել և ամրապնդել գործընկերային կապերը Սյունիքի մարզի գործատու ընկերությունների՝ մասնաճյուղի պրոֆիլին բնորոշ արտադրական ոլորտների գործարար կազմակերպությունների հետ և բազմազանեցնել հանրային ծրագրերում մասնաճյուղի ներգրավման ձևերը:

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները.

- Ընդլայնել երկարաժամկետ պայմանագրային հարաբերությունները մասնաճյուղի հիմնական գործատու ձեռնարկությունների հետ:
- Ապահովել մասնաճյուղի ներգրավումը Սյունիքի տնտեսության զարգացման կարևոր գիտատեխնիկական նախագծերում, հանրային կարիքներին բավարարմանն ուղղված տարածաշրջանային ծրագրերում և բնակչությանը մատուցել նոր ծառայություններ՝

օգտագործելով մասնաճյուղում առկա շարունակական կրթության դասընթացների կազմակերպման հաջողված փորձը:

- Կազմակերպել աշխատողների վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներ հիմնական գործատու ձեռնարկություններում (ԶՊՄԿ, ԱՊՄԿ, ԿԼՀԿ)՝ հնարավորության դեպքում հիմնելով բազային ամբիոններ կամ ամբիոնների մասնաճյուղեր:
- Իրականացնել նախապատրաստական աշխատանքներ գործատու ընկերությունների ֆինանսավորմամբ մասնաճյուղում ուսումնագիտական կենտրոնի ստեղծման ուղղությամբ՝ շնորհաշատ ուսանողների նպատակային ուսումնառության կազմակերպման համար:
- Ապահովել գործատու ձեռնարկությունների մասնակցությունը մասնաճյուղի զարգացման ծրագրերի մշակմանը, ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի կազմմանը և փորձաքննությանը, դիպլոմային աշխատանքների թեմաների ընտրությանը:
- Կազմակերպել մասնաճյուղի գործունեության վերաբերյալ գործատու ընկերությունների և հանրային կարծիքի ուսումնասիրություն՝ աշխատաշուկայի և կրթաշուկայի պահանջների բավարարման ծրագրերում մասնաճյուղի առավել արդյունավետ մասնակցություն ապահովելու համար:

ԽՆԴԻՐ 8.2. Ապահովել մասնաճյուղի զարգացման ծրագրերում շրջանավարտների, հովանավոր և բարեգործական կազմակերպությունների մասնակցությունը:

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները.

- Ամրապնդել և ընդլայնել կապը մասնաճյուղի շրջանավարտների հետ, պարբերաբար թարմացնել նրանց վերաբերյալ տվյալների բազան և հնարավորինս ներգրավել նրանց մասնաճյուղի զարգացման գործընթացում, նպաստել «ԵՐՊԻ-ՀՊՃՀ Շրջանավարտների միություն» ՀԿ Կապանի տարածքային կառույցի զարգացմանը:
- Շարունակել և ընդլայնել համագործակցությունը բարեգործական հիմնադրամների հետ («Պոլիտեխնիկ», «Քրոնիմետ», «Ինստիդեյթ» և այլն)՝ առավելագույնս ապահովելով դրանց մասնակցությունը մասնաճյուղի զարգացման ծրագրերում:
- Խթանել մասնաճյուղի զարգացման ծրագրերում շրջանավարտների, նվիրատու և հովանավոր կազմակերպությունների ու անհատների մասնակցությունը:

ԽՆԴԻՐ 8.3. Նպաստել մասնաճյուղի գործունեության համակողմանի միջազգայնացմանը և ներգրավմանը միջազգային գիտակրթական ինտեգրացիոն գործընթացներում:

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները.

- Օգտագործելով մասնաճյուղում իրականացված Տեմպուս նախագծի կատարման ընթացքում ձևավորված միջազգային կապերի հնարավորությունները՝ ամրապնդել և համակողմանիորեն զարգացնել նախագծի մասնակից երկրների՝ Գերմանիայի,

Ավստրիայի, Ռումինիայի, Իսպանիայի, Ուկրաինայի, Վրաստանի բուհերի հետ մասնաձյուղի համագործակցությունը:

- Միջազգայնացնել մասնաձյուղի գործունեությունը համալսարանի միջազգային համագործակցության ծրագրերի շրջանակներում և հաշվի առնելով Տեմպուս նախագծի ինքնուրույնաբար կատարման հաջողված փորձը՝ աշխատանքներ տանել նոր միջազգային ծրագրերում մասնաձյուղի ընդգրկման համար:

ԽՆԴԻԴ 8.4. *Զարգացնել հասարակության հետ մասնաձյուղի կապերը և նպաստել մասնաձյուղի հասարակական վարկանիշի բարձրացմանը:*

Ստրատեգիայի հիմնական ուղղությունները.

- Մերտացնել և բազմազանեցնել հասարակության հետ մասնաձյուղի կապերը, իրականացնել հանրային կարծիքի մոնիթորինգ՝ հասարակության կրթական ծառայությունների ծրագրերում մասնաձյուղի բազմակողմանի և առավել արդյունավետ մասնակցությունն ապահովելու նպատակով:
- Ակտիվորեն համագործակցել տարածաշրջանի ՁԼՄ-երի հետ՝ կանոնավոր բնույթ տալով ՀԱՊՀ-ի ու մարզի պարբերականներում լրատվական և գովազդային նյութերի հրապարակմանը: Բազմազանեցնել մասնաձյուղի վերաբերյալ տեղեկատվության տարածման և գովազդի միջոցները՝ լայնորեն օգտագործելով նաև համացանցի ընձեռած հնարավորությունները:
- Օգտագործել տարածաշրջանի ՁԼՄ-երը մասնաձյուղի դրական վարկանիշի պահպանման ու նրա հասարակական վարկանիշի բարձրացման նպատակով:

Առաջընթացի գնահատման կողմնորշիչ ցուցանիշներ (հինգ տարվա կտրվածքով).

- Մասնաձյուղի պրոֆիլին բնորոշ գործատու կազմակերպությունների տվյալների լրամշակված և ներդրված բազա՝ 2019թ. :
- Գործընկեր ձեռնարկությունների թիվը (ըստ կնքված պայմանագրերի)՝ 20-25:
- Արտաքին հովանավորությամբ իրականացվող զարգացման առնվազն 2 նախագիծ և ծրագրի (հինգ տարվա կտրվածքով):
- Ներդրումների և նվիրատվությունների հաշվեկշռային ծավալի աճ՝ արտաբյուջետային մուտքերի 3%:
- Մասնաձյուղում ներդրումներ կատարող պատվիրատու կազմակերպությունների թիվը 2021 թվականին՝ առնվազն 1:
- Մասնաձյուղի սեփական գովազդային միջոցառումների աճը՝ առնվազն 1,3 անգամ:
- Մասնաձյուղի վերաբերյալ ՁԼՄ-երի անդրադարձերի թվի աճը՝ առնվազն 1,5 անգամ:
- Մասնաձյուղի մասնակցությամբ ՀԱՊՀ-ի կողմից իրականացվող միջազգային նախագծերի թիվը 2021 թվականին՝ առնվազն 1:

ՎԵՐՋԱԲԱՆ

Սույն ստրատեգիական պլանը կոչված է ուղղորդել մասնաճյուղի հետագա զարգացման գործընթացը՝ իր առաքելությունը և պլանում նախանշված նպատակները 2017-2021թթ ժամանակահատվածում նոր իրողությունների ու հեռանկարների պայմաններում արդյունավետ կերպով իրականացնելու համար: Մասնաճյուղի համար ցանկալի զարգացումներ ապահովելու նպատակով պլանը ձգտում է կանխատեսել ապագան՝ ներկայացնելով ներկան:

Մասնաճյուղի ստրատեգիական պլանն ըստ էության Համալսարանի ստրատեգիական պլանի տեղայնացումն է՝ հաշվի առնելով տարածաշրջանային առանձնահատկությունները և ուրույն ստրատեգիական խնդիրները: Այդ համատեքստում պլանում առաջադրված նպատակների լրակազմը էական փոփոխություններ չի կրել: Պլանը նախատեսում է համապատասխան բնագավառներում առկա ձեռքբերումների պահպանում և ընդլայնում: Արդյունքում, առաջադրվել են մասնաճյուղի գործունեության հիմնական բնագավառներն արտահայտող 8 նպատակ ու համապատասխան խնդիրներ, դրանց լուծման ռազմավարական ուղղություններն ու առաջընթացի գնահատման ցուցանիշները: Ստրատեգիական նպատակների տեսակետից մասնակիորեն փոխվել են միայն որոշ շեշտադրումներ:

Մասնաճյուղի սույն ստրատեգիական պլանը կոշտ ծրագիր չէ և ենթակա է չկանխատեսված միջավայրային փոփոխություններին համահունչ ընթացիկ ճշգրտումների: Իրադրային չնախատեսված փոփոխությունների և զարգացման նոր հնարավորությունների ի հայտ գալու դեպքում մասնաճյուղը կարող է մշակել և Համալսարանի Գիտական խորհուրդ ներկայացնել առաջարկություններ առկա պլանի անհրաժեշտ փոփոխությունների, լրացումների կամ առաջընթացի գնահատման նախատեսված ցուցանիշների ճշգրտման վերաբերյալ:

Ստրատեգիական պլանի կենսագործման հաջողության հիմնական գրավականներն են. պոլիտեխնիկական լավագույն ավանդույթների պահպանումը, յուրաքանչյուրի կողմից համալսարանական համայնքին իր պատկանելության գիտակցումը և կոլեկտիվ պատասխանատվության դրսևորումն ու պլանը միասին կենսագործելու կամքը: Պլանի իրականացման հաջողությունը էապես կախված է կատարողներին պլանի մշակման մասնակիցներ կամ համախոհներ դարձնելու հանգամանքից: Պլանը կիրագործվի, եթե այն ընդունվի մասնաճյուղի բոլոր աշխատողների կողմից:

ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի 2018-2022թթ. ստրատեգիական պլանում նշված նպատակների և խնդիրների իրականացման ակնկալիքով, ցանկանք պլանին հաջող մեկնարկ և կենսագործում:

Հավելված
ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի տնօրենի
2017թ. սեպտեմբերի
Թիվ. հրամանի



**ՀԱՊՀ (ՀՊՃՀ) Կապանի մասնաճյուղի 2012-2016թթ. ռազմավարական
ծրագրի իրականացման և 2017-2021թթ. ռազմավարական ծրագրի մշակման
աշխատանքային խմբի կազմը**

Աշխատանքային խմբի ղեկավար՝ Բալասանյան Սեյրան Շամիրի - ԳԱ գծով տնօրենի տեղակալ

Անդամներ՝

1. Կոստանդյան Արթուր Ռուբենի – մասնաճյուղի տնօրեն,
2. Գրիգորյան Արամ Ժորայի – ԾՄԱ և ԿԿ բաժնի պետ,
3. Մարտիրոսյան Հերմինե Աշոտի – ՖՏ բաժնի պետ-գլխավոր հաշվապահ,
4. Ավետիսյան Արուս Ռոբերտի – Ընդհանուր բաժնի պետ,
5. Իսակյան Նունե Լիպարիտի - ԿՈԱ և ԱԿ բաժնի պետ,
6. Խաչատրյան Իվան Գուրգենի- Տ և Ս բաժնի պետ,
7. Եղիազարյան Անիկ Վանյայի – Տ և ՃՏ ֆակուլտետի ղեկան
8. Այվազյան Անահիտ Ապավենի - ԲԳ և ՏՀ ֆակուլտետի ղեկանի ժ/պ:

ՀԱՊՀ (ՀՊՃՀ) ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ 2012-2016 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄՓՈՓ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՀԱՊՀ (ՀՊՃՀ) Կապանի մասնաճյուղի 2012-2016թթ. ռազմավարական ծրագրի արդյունքները ամփոփվել են ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի տնօրենի 20.06.2017թ. թիվ 137 և 01.09.2017թ. թիվ 147 հրամաններով ձևավորված աշխատանքային խմբի կողմից: Կատարվել է ռազմավարական ծրագրի կատարման արդյունքների մանրակրկիտ վերլուծություն՝ ըստ նպատակների, խնդիրների և առաջընթացի կողմնորոշիչ ցուցանիշների: Արդյունքները քննարկվել և ընդունվել են մասնաճյուղի գիտական խորհրդի 2017թ. դեկտեմբերի 13-ի նիստում: Ստորև ներկայացվում է ռազմավարական ծրագրի կատարման ամփոփ արդյունքները համառոտ տեսքով:

Ն Պ Ա Տ Ա Կ 1 ԱՊԱՀՈՎԵԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՄՈՒՏՔԻ ԲԱԶՄԱԶԱՆԵՑՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԻՆՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՔԻՆ ՄԻԶՄԱՎԱՅՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ, ԲԱՎԱՐԱՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՍՑՆԵԼ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԸ

2012 թվականին ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի 2007-2011թթ. Ստրատեգիական պլանի ամփոփման ժամանակ գործատուների մոտ իրականացված հարցումների և ընդունելության գովազդարշավի ընթացքում տարածաշրջանի միջնակարգ ու ավագ դպրոցների ավարտական դասարանների աշակերտների հետ հանդիպումների վերլուծության արդյունքում մշակվեց մասնաճյուղի 2012-2016թթ. ընդունելության մասնագիտությունների կողմնորոշիչ հեռանկարային ցանկը, որը հստակեցվեց հետագայում մասնաճյուղի արտաքին և ներքին միջավայրերի վերլուծության իրականացումից հետո:

Բակալավրի կրթական ծրագրի նոր մասնագիտություններով առաջին անգամ ընդունելություն կատարվեց 2013 թվականին առկա ուսուցմամբ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտությունով, իսկ 2014 թվականին՝ հեռակա ուսուցմամբ «Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում» ու «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» («Ֆինանսաբանկային քումփյութերային համակարգեր» մասնագիտացմամբ) մասնագիտություններով:

Մի շարք օբյեկտիվ պատճառներով պայմանավորված՝ 2013 թվականից դադարեցվեց միջին մասնագիտական կրթական ծրագրով ընդունելությունը, իսկ 2016 թվականից բակալավրի կրթական ծրագրով «Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն» ու «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» /առկա/, «Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում» /հեռակա/ մասնագիտություններով:

2016 թվականից բակալավրի կրթական ծրագրով ընդունելություն կատարվում է առկա ուսուցման 4 և հեռակա ուսուցման 6 մասնագիտություններով:

«Տեղեկատվական տեխնոլոգիաներ» մասնագիտության ուսումնական պլանի արմատական փոփոխությունների և այդ պլանը «Տեղեկատվական համակարգեր» մասնագիտությանը փոխանցելու մասին տեղեկատվության և վերջինիս լիցենզիայի բացակայության պատճառով, 2016/17 և 2017/18 ուստարիների ընդունելությունը կատարվել է ՏՏ մասնագիտությամբ, որի ուսուցման համար ներկայումս մասնաճյուղում բացակայում է համապատասխան դասախոսական կազմ, ուսումնալաբորատոր և ուսումնամեթոդական հենք:

2012-2016թթ. զգալի աշխատանք է կատարվել դիմորդների մասնագիտական կողմնորոշման, ընդունելության գովազդարշավի ընդլայնման և բազմազանեցման ուղղությամբ: Յուրաքանչյուր տարի կազմակերպվել է «Բաց դռների օր» ընդունելության գործընթացի նախապատրաստման աշխատանքներին զուգահեռ դիմորդների համար կազմակերպվել են անվճար նախապատրաստական դասընթացներ «Մաթեմատիկա» և «Ֆիզիկա» առարկաներից:

Ռազմավարական ծրագրով նախանշված հիմնական կրթության ծրագրով ընդունված դիմորդների առնվազն 200 թվի փոխարեն 2016 թվականին արձանագրվել է 113 ցուցանիշը, որը հիմնականում պայմանավորված է ժողովրդագրական իրավիճակով (Մյունխիքի մարզում 2012 թվականին հանրակրթական ուսումնական հաստատություններ են ավարտել 1741 շրջանավարտ, իսկ 2016 թվականին՝ 1325 շրջանավարտ): Դպրոցների շրջանավարտների թվի նվազմանը զուգընթաց նվազել է նաև մասնաճյուղի առկա ուսուցմամբ դիմորդների թիվը /2012թ.՝ 85 դիմորդ, 2016թ.՝ 62 դիմորդ/: Թեև դիմորդների թիվը նվազել է 27%-ով, սակայն 2012 թվականին համեմատ 2016 թվականին ընդունված դիմորդների թիվը նվազել է ընդամենը 3-ով /ընդունված դիմորդների առավելագույն թիվ՝ 59, արձանագրվել է 2014 թվականին, իսկ նվազագույն թիվ՝ 45, արձանագրվել է 2013 թվականին/: Ի համեմատ 2012 թվականի (85 դիմորդ) 2016 թվականին նվազել է նաև հեռակա ուսուցմամբ դիմորդների թիվը (70 դիմորդ): Չնայած դիմորդների թվի նվազմանը՝ 2012թ. համեմատ 2016 թվականին ընդունված դիմորդների թիվը աճել է 9-ով /ընդունված դիմորդների առավելագույն թիվ՝ 56, արձանագրվել է 2015 թվականին, իսկ նվազագույն թիվ՝ 47, արձանագրվել է 2013 և 2014 թվականներին/:

Հարկ է նշել, որ մինչև 2014 թվականը մասնաճյուղում չէր իրականացվում միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմությամբ շրջանավարտների՝ բակալավրի կրթական ծրագրով ուսումնառության շարունակություն: Մեծ աշխատանք է տարվել քոլեջ–մասնաճյուղ գործուն կապի ստեղծման ու ամրապնդման և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմությամբ շրջանավարտների՝ ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղում բակալավրի կրթական ծրագրով ուսումը շարունակելու ուղղությամբ: Իրականացված աշխատանքների շնորհիվ 2014–2016թթ. միջին մասնագիտական կրթությամբ 13 շրջանավարտ կրթությունը շարունակում են մասնաճյուղում:

Անհրաժեշտ է նշել, որ դեռևս չի հաջողվել մասնաճյուղի կազմում ստեղծել ավագ դպրոց, որը, հատկապես ներկայիս ժողովրդագրական իրավիճակի պարագայում, մասնագիտական կողմնորոշմամբ դիմորդների հոսքի կայունացման նպատակով խիստ անհրաժեշտ է մասնաճյուղին, ինչպես նաև չի հաջողվել տարածաշրջանի ավագ դպրոցներում ստեղծել հենակետային դասարաններ: Անհրաժեշտ է նաև քայլեր ձեռնարկել մասնաճյուղում մագիստրոսի կրթական ծրագրով ուսուցում կազմակերպելու ուղղությամբ:

Հաշվի առնելով տարածաշրջանում բուհերի դիմորդների տարեցտարի պակասող հոսքը՝ մասնաճյուղի համար կարևորվեց լրացուցիչ և շարունակական կրթության ներդրումն ու զարգացումը: Կազմվեցին և սահմանված կարգով հաստատվեցին 20 ուսումնական պլաններ Լրացուցիչ կրթության համակարգի ձևավորման ուղղությամբ իրականացված աշխատանքի շնորհիվ իրականացվել է 4 դասընթաց (34 ունկնդիր): Նշենք, որ դեռևս չի հաջողվել մասնագիտական վերապատրաստման դասընթացներ իրականացնել տարածաշրջանի հանքաարդյունաբերական ձեռնարկությունների աշխատողների համար, որի ուղղությամբ տարված աշխատանքները չեն տվել ցանկալի արդյունք:

Արձանագրենք նաև, որ ռազմավարական ծրագրով նախանշված հիմնական կրթության ծրագրով առնվազն 600 ուսանողական համակազմի փոխարեն 2016 թվականին առկա է (01.11.2016թ. դրությամբ) 437 ցուցանիշը, որը խիստ շաղկապված է առկա ուսուցման ընդունելության ցուցանիշի նվազման հետ: Միաժամանակ համեմատելով նոյեմբերի 1-ի դրությամբ բակալավրի կրթական ծրագրով ուսանողական համակազմը 2012/2013 և 2016/2017 ուսումնական տարիներին, ապա արձանագրում ենք, որ այն աճել է մոտ 4,8%-ով: Աճը տեղի է ունեցել հեռակա ուսուցման հաշվին: Վճարովի հիմունքներով ուսումնառող ուսանողների հաշվեկշիռը 82,27%-ից աճել է 86,82%, այնուհետև նվազել մինչև 84,75%:

2012/2013 – 2016/2017 ուսումնական տարիներին մասնաճյուղը տվել է բակալավրի կրթական ծրագրի 430 շրջանավարտ, որոնցից 38-ը ստացել են գերազանցության դիպլոմ և 31 շրջանավարտ ուսումը շարունակել են մագիստրատուրայում:

Այսպիսով, հաշվի առնելով դպրոցների շրջանավարտների թվի նվազման միտումը, 2017-2021թթ. համար կարևորագույն ստրատեգիական խնդիրներ են առաջադրվում ընդունելության ցուցանիշների բարելավումը, մասնաճյուղի կազմում ավագ դպրոցի ստեղծումը և, հնարավորության դեպքում, ավագ և միջնակարգ դպրոցներում հենակետային դասարանների հիմնումը, դպրոց-մասնաճյուղ և քոլեջ-մասնաճյուղ կապի էլ առավել ամրապնդումը, ուսանողական համակազմի և ունկնդիրների թվի պահպանումն ու ավելացումը, տարածաշրջանի հանքարդյունաբերական ձեռնարկությունների աշխատողների համար մասնագիտական վերապատրաստման դասընթացների կազմակերպումը:

Ն Պ Ա Տ Ա Կ 2 ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ԱՊԱՀՈՎԵԼ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՄԻԱՆՈՂ ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

2012 թվականից ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղում գործել է «Կրթության որակի ապահովման և վերահսկման» բաժինը, որը հետագայում վերանվանվել է «Կրթության որակի ապահովման և արտաքին կապերի» բաժնի՝ ընդլայնելով վերջինիս գործառնությունները:

2012-2016թթ. շարունակական բնույթ են կրել ENQA (Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի) չափանիշներին համատեղելի համալսարանում ձևավորվող Որակի ներքին ապահովման համակարգի շրջանակներում ներմասնաճյուղային ուսուցման որակի գնահատման և ապահովման համակարգի ձևավորման աշխատանքները՝ ապահովելով սերտ համագործակցություն երևանյան կրթահամալիրի և ՀԱՊՀ մյուս մասնաճյուղերի որակի ապահովման պատասխանատուների հետ: 2012/2013 ուսումնական տարում մասնաճյուղն ակտիվ մասնակցություն է ունեցել համալսարանի կողմից կրթության որակի ապահովման և շարունակական բարելավման ներքին համակարգի զարգացման ու որակի մշակույթի ձևավորման նպատակով կազմակերպած վարժանքներին, և ՀՊՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների իրականացման ժամանակաշրջանում մասնաճյուղում ստեղծված աշխատանքային խումբը պատշաճ կերպով իրականացրեց Կապանի մասնաճյուղի ինքնավերլուծությունը:

Նույն ուսումնական տարում որակի պատասխանատուներն ակտիվորեն մասնակցել են Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» ծրագրի շրջանակներում Հայաստանի Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՄԿՈԱԱԿ-ի) կողմից կազմակերպված «Որակի արտաքին և ներքին ապահովման համակարգերի մշակում և բարելավում» թեմայով վերապատրաստումներին և TEMPUS նախագծի շրջանակներում իրականացվող միջոցառումներին:

Մասնաճյուղի որակի պատասխանատուներն ակտիվ մասնակցություն են ցուցաբերել նաև կազմակերպված համաժողովներին և դասընթացներին:

2012-2016թթ. ձեռնարկվել են կրթական ծրագրերին համապատասխանող որակյալ կրթություն ապահովող բարեփոխումներ, որի ընթացքում իրականացվող գործընթացներն ու գործողությունները եղել են խիստ թափանցիկ:

Շարունակական աշխատանքներ են տարվել արտադրական և նախաավարտական պրակտիկաների արդյունավետության բարձրացման ճանապարհով ուսանողների գործնական պատրաստականության մակարդակի բարելավմանը միտված աշխատանքները: Հարկ է նշել, որ կատարված նպատակային աշխատանքների շնորհիվ, 2012 թվականից սկսած պրակտիկաների անցկացման կարճաժամկետ պայմանագրերը փոխարինվել են երկարաժամկետ պայմանագրերով:

«Կրթության որակի ապահովման և արտաքին կապերի» բաժնի կողմից պարբերաբար իրականացվել են կրթական ծրագրերից և շրջանավարտներից գործատուների բավարարվածության վերաբերյալ պարբերական ուսումնասիրություններ (2014/2015 ուսումնական տարի՝ 7 կազմակերպություն, 2015/16 ուսումնական տարի՝ 6 կազմակերպություն):

Համաձայն համալսարանի կրթական ծրագրերի որակի ապահովման ընթացակարգերի և հաստատված ձևաչափերի մասնաճյուղում իրականացվել են ամենամյա սոցիոլոգիական հարցումներ՝ ապահովելով մասնաճյուղի ուսանողական խորհրդի ներկայացուցիչների ակտիվ մասնակցությունը. «Դասախոսը ուսանողի պչքերով» - 2012/2013-2016/2017 ուստարիներ, «Դասավանդում-ուսումնառություն-գնահատում» - 2013/14, 2014/15 և 2016/2017 ուստարիներ, «Կուրսային աշխատանքի (նախագծի) արդյունավետության գնահատում» - 2013/14 ուսումնական տարի, «Կրթություն –ուսումնառություն - որակ» - 2016/2017 ուսումնական տարի, ինչպես նաև սոցիոլոգիական հարցումներ են իրականացվել ավարտական կուրսերի ուսանողների շրջանում՝ ստացած կրթությունից ուսանողների բավարարվածության, կրթական ծրագրերից բավարարվածության, ամփոփիչ ատեստավորման որակի վերաբերյալ: Սոցիոլոգիական հարցումների արդյունքները ներկայացվել են ֆակուլտետներին և ամբիոններին՝ քննարկման, վերլուծությունների, եզրակացությունների համար:

2014/15 ուստարում սոցիալոգիական հարցումներ են իրականացվել նաև մասնաճյուղում կազմակերպված լրացուցիչ կրթության ծրագրով դասընթացների վերաբերյալ:

2014/15 ուսումնական տարուց սոցիալագիական հարցումներն իրականացվում են նաև առցանց համակարգով, իսկ 2015/16 ուստարում հարցումները իրականացվում են ՀԱՊՀ որակի ապահովման էլեկտրոնային առցանց համակարգով:

Հարկ է նշել, որ թեև շարունակաբար աշխատանքներ են տարվել ուսումնական ենթակառուցվածքների բարելավման ու արդիականացման, դասավանդման մեթոդական հենքի, տեխնոլոգիական ռեսուրսների և տեխնոլոգիական կարողությամբ լսարանների ցանցի զարգացման ուղղությամբ, սակայն պետք է շարունակել տարվող աշխատանքները նաև հաջորդ հնգամյակում:

2012/13 ուստարում մասնաճյուղը մասնակցել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացին՝ ըստ ՄԿՈԱԱԿ-ի սահմանած որակի ապահովման և հավատարմագրման չափանիշների: Ինքնավերլուծություն իրականացնող մասնաճյուղի աշխատանքային խմբի հետ համատեղ աշխատանքներին ակտիվ մասնակցություն են ցուցաբերել նաև ուսանողները: Աշխատանքային խմբի անդամներին ինստիտուցիոնալ ինքնավերլուծության գործիքամիջոցներին ծանոթացնելու նպատակով պարբերաբար իրականացվել են վարժանքներ ՀՊՀ-ում և մասնաճյուղում: Հրապարակվել է մասնաճյուղի ինքնավերլուծությունը, այն տրամադրվել համալսարանի ինքնավերլուծությունն իրականացնող աշխատանքային խմբին, ՄԿՈԱԱԿ-ին, ինչպես նաև՝ տեղադրվել մասնաճյուղի կայքում:

Մասնաճյուղը շարունակաբար համագործակցված աշխատանքներ է իրականացնում Երևանի կրթահամալիրի հետ՝ կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացներում:

Արձանագրենք, որ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին ինտեգրման և աշխատաշուկայի արդիական պահանջներին համահունչ կրթության կազմակերպման անհրաժեշտությամբ պայմանավորված, որպես ստրատեգիական խնդիրներ 2017-2021թթ. նույնպես պահպանվում են աշխատաշուկայի պահանջներին համահունչ մասնաճյուղում արդիական կրթական ծրագրերով ուսուցման իրականացումը, լիարժեք գործող որակի ապահովման և վերահսկման ներմասնաճյուղային համակարգի առկայությունը, կրթության որակի ու արդյունավետության շարունակական բարձրագույնը, մերձեցումը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին, մասնաճյուղի պատշաճ մասնակցությունը նախատեսվող մոնիթորինգներին և հավատարմագրման գործընթացներին:

Ն Պ Ա Տ Ա Կ 3 ԱՊԱՀՈՎԵԼ ԱՐԴԻ ԿՐԹԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ԲԱՎԱՐԱՐՈՂ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՊՏԻՄԱԼ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՄԱԿԱՐԳ

2013 թվականին իրականացվեց դասախոսական առկա ներուժի գնահատում (հաշվառում): Վերլուծության արդյունքում արձանագրվեց, որ գիտական աստիճան ունեցողների հաշվեկշիռը հիմնական դասախոսական կազմում կազմել է 28,95%, իսկ լրիվ

դասախոսական կազմում՝ 30,61% (*առանց ժամավճարային հիմունքներով ձևակերպվածների*): Անհրաժեշտ ուշադրություն դարձնելով գիտական կադրերով հիմնական դասախոսական կազմի համալրման խնդրին, ինչպես նաև ակտիվորեն օգտագործելով հայցորդության ընձեռած հնարավորությունները 2016 թվականին հիմնական կազմում գիտական աստիճան ունեցողների հաշվեկշիռը հասցվեց 37,8%:

Համեմատելով պրոֆեսորադասախոսական և ուսումնասովանողական կազմի հաստիքների կառուցվածքը 2011/12 և 2016/2017 ուսումնական տարիներին՝ արձանագրում ենք, որ էականորեն բարելավվել է պրոֆեսորադասախոսական կազմը. հիմնական կազմում պրոֆեսորների թիվը 0-ից աճել է մինչև 2, դոցենտներինը՝ 6-ից մինչև 8, ինչպես նաև 1-ով ավելացել է գիտությունների թեկնածու, ասիստենտների թիվը, վերջին 5 տարիների ընթացքում հայցորդների թիվը 1-ից աճել է մինչև 6, որոնցից 2-ը պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն: Սակայն հարկ է արձանագրել, որ դեռևս չի հաջողվում ապահովել ռազմավարական ծրագրով նախանշված հիմնական պրոֆեսորադասախոսական կազմում գիտական աստիճան ունեցողների առնվազն 50% ցուցանիշի կատարողականը:

Հարկ է նշել, որ արդեն 2016/2017 ուսումնական տարուց (2017թ. փետրվար) սկսվել են մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման դասընթացները, որին մասնակցում են 14 դասախոս:

Աննշան աճել է դասախոսների միջին տարիքը՝ կազմելով 48,2:

Ուսանող/դասախոս հարաբերակցությունը տատանվել է 8:3-ից մինչև 10,2:1 սահմաններում, թեև նախանշված էր հասնել հարաբերակցության 12:1 ցուցանիշի: Միաժամանակ նախանշված ցուցանիշին (առնվազն 6:1) մոտ է եղել ուսանող/աշխատող հարաբերակցությունը՝ 2015/2016 ուսումնական տարում հասնելով՝ 5,9:1 հարաբերակցության: Անհրաժեշտ է էլ ավելի բարձրացնել դասախոսական հաստիքների օգտագործման արդյունավետությունը:

Կառավարման արդյունավետության և որակի բարձրացման համար ինչպես 2012-2016թթ., այնպես էլ յուրաքանչյուր ուսումնական տարվա համար կազմվել և մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից հաստատվել են ռազմավարական ծրագրի իրականացման պլան-ժամանակացույցերը, տարեկան աշխատանքային պլանները: Պարբերաբար տնօրինության նիստերում քննարկվել և գնահատվել են վերոնշյալ պլանների կատարման ընթացքը, վերլուծվել թերացումների պատճառները և ձեռնարկվել աշխատանքների բարելավմանն ուղղված համապատասխան միջոցառումներ:

Կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման և կառուցվածքային միավորների անվանումների հստակեցման նպատակներով մասնաճյուղի գիտական խորհրդի առաջարկությամբ և համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ մասնաճյուղում իրականացվել են մի շարք անվանական և կառուցվածքային փոփոխություններ:

Համալսարանի կողմից հաստատված իրավական-նորմատիվային փաստաթղթերին զուգընթաց, մշակվել և գիտական խորհրդի կողմից հաստատվել են մասնաճյուղի գործունեության տարբեր ոլորտները կարգավորող անհրաժեշտ փաստաթղթեր. ներքին կարգապահության կանոնները, կանոնակարգեր, կարգեր և հրահանգեր:

2012 թվականից համալսարանի կողմից Mulberry փաստաթղթաշարժային էլեկտրոնային համակարգի ներդրումը էապես կրճատեց փաստաթղթաշարժության համար պահանջվող ժամանակը:

Իր առօրյա և բնականոն գործունեությունն է ծավալել նաև ուսանողական խորհուրդը, որը համակարգել է ուսանողության մասնակցությունը մասնաճյուղի կառավարման գործընթացներում և աջակցել տարաբնույթ միջոցառումների կազմակերպման աշխատանքների ժամանակ:

Արձանագրենք նաև, որ թեև 01.01.2012թ.-ից մինչև 31.08.2014թ. պարբերաբար կատարվել է դասախոսական կազմի աշխատավարձի բարձրացում (օրինակ՝ գիտ. թեկնածու, դոցենտի ժամային դրույքաչափը, վերահաշվարկված ըստ 01.01.2013թ. ուժի մեջ մտած «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի, մինչև 01.01.2012թ. կազմել է 1637 ՀՀ դրամ, իսկ մինչև 01.09.2014թ.՝

2249 դրամ, աճ՝ 37,4%-ով), սակայն 01.09.2014թ.-ին ժամային դրույքաչափն իջեցվել է միջինը 1,83%-ով (01.09.2014թ.-ից գիտ. թեկնածու, դոցենտի ժամային դրույքաչափը կազմում է 2200 ՀՀ դրամ, նվազում՝ 2,18%-ով):

Քանի որ, հնարավոր չի եղել իրականացնել դասախոսական կազմի աշխատավարձի կտրուկ բարձրացումներ, իսկ ՀՀ-ում յուրաքանչյուր տարի ավելանում էր միջին ամսական անվանական աշխատավարձը, ապա չի հաջողվել ապահովել ռազմավարական ծրագրով սահմանված «ՀՀ պաշտոնական միջին աշխատավարձի 150%-ը կազմող դասախոսական կազմի միջին աշխատավարձ» ցուցանիշը:

Ամփոփելով՝ եզրահանգում ենք, որ 2017-2021թթ. համար կրկին կարևորվում են որակյալ կադրային ներուժի առկայությունը, այդ ներուժի օպտիմալ պլանավորման և արդյունավետ օգտագործման, մասնաճյուղի կառավարման արդյունավետության բարձրացման խնդիրները, դասախոսական կազմի համալրումը, կատարելագործումը և մասնագիտական առաջընթացը, ուսանողական ինքնավարության զարգացումը և մասնաճյուղում իրականացվող գործընթացներում ուսանողների դերակատարության բարձրացումը:

Ն Պ Ա Տ Ա Կ 4 ՁԵՎԱՎՈՐԵԼ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ, ԱՊԱՀՈՎԵԼ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԻՆՖՐԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՏՇԱԿ
ՄԱԿԱՐԴԱԿ

2012-2016թթ. մեծածավալ աշխատանք է իրականացվել ուսումնական և աշխատանքային պայմանների բարելավման, մասնաճյուղի տարածքի բարեկարգման, մասնաշենքերի պահպանման, բնականոն կենսագործունեության սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման ուղղություններով:

Նշված ժամանակաշրջանում իրականացվել են ասֆալտապատման, ոռոգման ջրի անցկացման, բետոնե և բազալտե եզրաքարերի տեղադրման, գլխավոր մասնաշենքի մուտքին հարակից տարածքի սալիկապատման, մասնաճյուղի տարածքի լուսավորության վերականգնման և բարեկարգման, գլխավոր մասնաշենքի նկուղից մակերևութային և ընդերքային ջրերի հեռացման, ընթացիկ վերանորոգման աշխատանքներ:

Հնամաշ, ոչ պիտանի թվով 20 գրատախտակներ փոխարինվել են նոր գրատախտակներով, լսարանների համար գնվել են ամբիոններ:

ՀԱՊՀ աջակցությամբ Համաշխարհային բանկի «Արդիական միասնական պոլիտեխնիկ» ծրագրով երկրորդ ուսումնական մասնաշենքում ստեղծվեցին ժամանակակից սարքավորումներով հագեցված «Ճարտարագիտական լաբորատորիա»-ն ու «Հեռաուսուցման լսարան»-ը: «Ճարտարագիտական լաբորատորիա»-ի համար առանձնացված սենյակի կապիտալ վերանորոգումը և «Հեռաուսուցման լսարան»-ի վերանորոգումը, «Հեռաուսուցման լսարան»-ի գույքի համալրումը, ինչպես նաև «Ճարտարագիտական լաբորատորիա»-ի ոչ լաբորատոր գույքի ձեռք բերումը կատարվել է մասնաճյուղի կողմից: ՄԱԿ-ի ծրագրով «Կայուն Զարգացում» ՀԿ-ի հետ համատեղ մասնաճյուղում ստեղծվեց «Վերականգնվող էներգիայի և էներգաարդյունավետ տեխնոլոգիաների լաբորատորիա»-ն: Լաբորատորիան մասնաճյուղի ուժերով համալրվեց որոշակի գույքով և հանդերձանքով:

2012-2013 ուսումնական տարում մշակվեցին նախկին հանրակացարանի մասնաշենքի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերը, սակայն համապատասխան ֆինանսական միջոցների բացակայության պատճառով հնարավոր չէրավ իրականացնել մասնաշենքի հիմնանորոգումը:

2012/13 ուսումնական տարում սկիզբ դրված ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի, «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի և «Ձեռնարկությունների Ինկուբատոր» հիմնադրամի միջև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում համատեղ գործունեության արդյունքում ուսումնական 3-րդ մասնաշենքում (նախկին ճաշարանի մասնաշենք) ստեղծվեցին Սոբայլ լուծումների և Սյունիքի մարզի դպրոցականների համար ինժեներական լաբորատորիաները:

«Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ԻԱՄ-ի և «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի աջակցությամբ ստեղծվել է տեղեկատվական տեխնոլոգիաների ուղղվածությամբ արդիական «Ինժեներական լաբորատորիա»-ն (լաբորատորիայի սենյակի՝ հիմնանորոգումը և լաբորատորիայի հարակից տարածքի՝ մասնակի վերանորոգումը, ինչպես նաև ոչ լաբորատոր գույքի /սեղաններ, աթոռներ/ համալրումը իրականացվել է մասնաճյուղի կողմից): Ձևավորվել է TEMPUS նախագծի շրջանակում ստեղծված հեռավար GOLDI (Grid of Online Laboratory Devices Ilmenau՝ Իլմենաուի հեռավար լաբորատոր սարքերի ցանց) հիբրիդային լաբորատորիան:

Հարկ է նշել, որ արդիականացման կարիք ունեն մի շարք լաբորատորիաներ («Ֆիզիկայի լաբորատորիա-լսարան», «Քիմիայի լաբորատորիա-լսարան», «Շինարարության լաբորատորիա» և «Էլեկտրատեխնիկայի լաբորատորիա»), ուստի անհրաժեշտ է շարունակել ուսումնագիտական լաբորատոր բազայի փուլային արդիականացման աշխատանքները՝ ինչպես համալսարանի աջակցությամբ, այնպես էլ մասնաճյուղի ուժերով:

Գլխավոր մասնաշենքում հիմնովին վերանորոգվել և կահավորվել է ընթերցասրահը (ներառյալ՝ էլեկտրոնային ընթերցասրահի ստեղծում), ստեղծվել և նոր գույքով կահավորվել է մեկ վարչական սենյակ, վերանորոգվել և նոր գույքով կահավորվել են «Բանասիրական գիտությունների դոկտոր Վաչե Պապիկի Եփրեմյանի անվան լսարան»-ն ու ԲԳ և ՏՀ ֆակուլտետի դեկանի աշխատասենյակը, առաջին հարկում ստեղծվել են պատճենահանման և անվտանգության աշխատակցի նոր սենյակներ: Ուսումնական և օժանդակ տարածքների առավել արդյունավետ օգտագործման նպատակով գլխավոր մասնաշենքի 1 վարչական սենյակ և երկրորդ ուսումնական մասնաշենքի նախկինում չօգտագործվող 3 սենյակ ներկայումս օգտագործվում են ուսումնագիտական նպատակներով:

Օգտակար ուսումնական մակերեսների աճ արձանագրվել է 2014 թվականին՝ 4,28 % և 2016 թվականին՝ 0,78 %, ապահովված է եղել մեկ ուսանողին ընկնող 8 քմ մակերեսի ցուցանիշը:

Արձանագրենք, որ մասնաշենքերի ընթացիկ նորոգման և հիմնանորոգման ծախսերի հաշվեկշիռը մասնաճյուղի բյուջեում 2012 թվականին կազմել է 5,29%, 2013 թվականին՝ 4,83%, իսկ մնացած տարիներին զգալի ցածր է եղել սահմանված առնվազն 5% ցուցանիշից: Համապատասխան ֆինանսական միջոցների բացակայության պատճառով չեն իրականացվել հանրակացարանի մասնաշենքի, մարզադահլիճի և հարակից մարզահրապարակի հիմնանորոգման աշխատանքները:

2013 թվականին մասնաճյուղում իրականացվել է գրադարանային ռեսուրսների գույքագրման և ուսումնասիրության աշխատանքներ: Թեև գրադարանային նոր ռեսուրսների ձեռք բերման համար ծախսված գումարները ցածր են եղել նախանշված՝ արտաբյուջեի 1% ցուցանիշից, մասնաճյուղի գրադարանը 2012/2013-2015/2016 ուսումնական տարիների ընթացքում համալրվել է 1207 կտոր գրականությամբ:

2016թ. ստեղծվեց «Սոցիալական օգնության ֆոնդ»-ը, մշակվեց և մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից հաստատվեց աշխատողների սոցիալական աջակցության կանոնակարգը (կանոնակարգի գործունեությունը համալսարանի պահանջով կասեցվեց 2016 թվականի վերջում): 2016 թվականին «Սոցիալական օգնության ֆոնդ»-ից 3 աշխատակցի ցուցաբերվել է դրամական օգնություն, փոխանցվել 3 աշխատակցի հայցորդության ուսման վարձի 15%-ը (ընդհանուր գումարը՝ 427, 85 հազ. դրամ), ինչպես նաև օգնություն է տրամադրվել 4 խիստ կարիքավոր ուսանողների (199 800 ՀՀ դրամ):

Ամփոփելով սույն նպատակի կատարման արդյունքները՝ նշենք, որ արդի կրթական և հետազոտական պահանջներին բավարարող ուսումնագիտական լաբորատոր բազայի ձևավորումը, լսարանային ֆոնդի, ուսումնական և աշխատանքային պայմանների էլ ավելի բարելավումը, աշխատակիցների սոցիալական կարիքների բավարարման ուղղված սոցիալական ծրագրերի իրականացումը շարունակում են մնալ կարևոր ստրատեգիական խնդիրներ նաև հաջորդ հնգամյակում:

Ն Պ Ա Տ Ա Կ 5 ԱՊԱՀՈՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԵՎԱՎՈՐԵԼ ՕՊՏԻՄԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2012-2016թթ. մասնաճյուղի գործունեության բոլոր բնագավառների համար կատարվել է տարեկան եկամուտների և ծախսերի պլանավորում, իրականացվել ուսանողական համակազմի, կադրային և տեղեկատվական ռեսուրսների, նյութատեխնիկական բազայի, ֆինանսական ռեսուրսների և աշխատանքի վարձատրության պլանավորում, ապահովվել է ֆինանսական ռեսուրսների արդյունավետ ու թափանցիկ բաշխում, սահմանվել կողմնորոշիչ համամասնություններ մասնաճյուղի զարգացմանը, աշխատանքի վարձատրությանը և ինֆրակառուցվածքի պահպանմանն ուղղված միջոցների ծավալների միջև:

Հնգամյա կտրվածքով վերլուծելով ֆինանսական գործունեության արդյունքները՝ արձանագրում ենք հետևյալը:

2012 թվականի համեմատ 2016 թվականին արտաբյուջետային մուտքերն աճել են 20,95%-ով (նախատեսված էր առնվազն 20% աճ):

2012 թվականին մասնաճյուղի կայունացման ֆոնդը կազմել է 54,677 մլն. դրամ /ընդհանուր եկամուտների 30,31%-ը/, որի զգալի մասը (40 մլն. դրամ) նախատեսված էր 2011թ. առկա ուսուցման ընդունելության բացակայության հետևանքով ծագած ֆինանսական ճեղքվածքի չեզոքացման համար, իսկ 2016 թվականին կայունացման ֆոնդը կազմել է 37,842 մլն. դրամ /ընդհանուր եկամուտների 20,56%-ը/ (նախատեսված էր առնվազն 7%):

Ինֆրակառուցվածքի պահպանմանն ուղղվող միջոցների հաշվեկշիռը կազմել է 6,3% ից մինչև 11,5% (նախատեսված էր առնվազն 5%):

Զարգացմանն ուղղված միջոցների հաշվեկշիռը կազմել են 1,65%-ից մինչև 6,1% (նախատեսված էր առնվազն 10%): Թեև նախատեսվածից ցածր են եղել ցուցանիշները, սակայն դրան զուգահեռ միջազգային ծրագրերով, ՀԱՊՀ աջակցությամբ, «Քրոնիմետ» բարեգործական կազմակերպության, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի, «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ԻԱՄ և «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի և ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի համագործակցության արդյունքում իրականացվել են զարգացման հետևյալ ծրագրերը. «Ճարտարագիտական լաբորատորիա»-ի, «Հեռուստուցման լսարան»-ի, «Մոբայլ լուծումների և Սյունիքի մարզի դպրոցականների համար ինժեներական լաբորատորիաներ»-ի, «GOLDI հիբրիդային լաբորատորիա»-ի և «Ինժեներական լաբորատորիա»-ի ստեղծում:

Ուսանողներին տրամադրված ֆինանսական օգնության (ներառյալ ուսման վարձերի զեղչերը) և վճարովի ուսուցումից արտաբյուջետային մուտքերի հարաբերությունը նախատեսված 1/30-ի փոխարեն կազմել է 1/17-ից մինչև 1/4: Այդպիսի ցուցանիշ արձանագրվել է ինչպես մասնաճյուղի կողմից ուսանողներին տրամադրված ֆինանսական օգնության, այնպես էլ մասնաճյուղի հետ համագործակցող կազմակերպությունների կողմից ուսանողներին տրամադրված օգնությունների շնորհիվ:

2016 թվականին ստեղծվեցին աշխատողների սոցիալական օգնության (1600 հազ. դրամ) և խրախուսման (1100 հազ. դրամ) ֆոնդերը:

Ֆինանսական միջոցների ներհոսքի մեծացման և բազմազան դարձնելու ուղղությամբ իրականացված աշխատանքների շնորհիվ 2012-2016թթ. արձանագրվել է լրացուցիչ կրթական ծառայությունների մատուցումից ստացված 3,223 հազ. դրամ ֆինանսական միջոցների ներհոսք /2014-2015թթ.՝ 2,163 հազ. դրամ, 2016թ.՝ 1,06 հազ. դրամ /:

2014 թվականից սկսած ֆինանսական միջոցների ներհոսքի նոր աղբյուր հանդիսացավ նաև բակալավրի կրթական ծրագրով միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմությամբ շրջանավարտների ուսումնառության կազմակերպումը մասնաճյուղում:

Հարկ է նշել, որ ավագ դպրոցի ստեղծումը և մագիստրոսական կրթական ծրագրով ուսուցման կազմակերպումը դիմորդների և ուսանողական համակազմի թվի աճին զուգահեռ մասնաճյուղի համար կհանդիսանան լրացուցիչ ֆինանսական ներհոսքի աղբյուրներ:

Լրացուցիչ ֆինանսական ներհոսքերի ապահովումը, միջազգային ծրագրերով և դոնոր կազմակերպությունների միջոցով զարգացման ծրագրերի իրականացումը, ինչպես նաև ռեսուրսախնայողությունը և մասնաճյուղի կառավարման համակարգի օպտիմալացումը թույլ կտան իրականացնել նաև աշխատողների աշխատավարձերի պարբերաբար բարձրացում, ինչը չհաջողվեց իրականացնել վերջին տարիներին:

Վերջում հավելենք, որ 2012 թվականին արձանագրվել է ընդհանուր եկամուտների աճ (2011թ.- 168024 մլն. դրամ, 2012թ.- 180412 մլն. դրամ), իսկ 2013 և 2014 թվականներին այն նվազել է (2013թ.- 168388 մլն. դրամ, 2014թ.- 155015 մլն. դրամ): Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով՝ մասնաճյուղում 2012 թվականի հունվար ամսից մինչև 2013 թվականի սեպտեմբեր ամիսն ավելացել է վարչատնտեսական մոտ 14.5 հաստիք (2012թ. հունվար՝ 4,5, 2012թ. ապրիլ՝ 3, 2012թ. սեպտեմբեր՝ 0,5, 2013թ. հունվար՝ 3, 2013թ. սեպտեմբեր՝ 3,5): Պայմանավորված ընդհանուր եկամուտների նվազման, 2012թ. հունվարից ընդհանուր աշխատավարձերի 15% և դրանից հետո 2012 ու 2013 թվականներին դասախոսական կազմի ժամային դրույքաչափերի բարձրացման, 2012/2013 ուստարում մոտ 9000 ժամով ուսումնական բեռնվածքի ավելացման հանգամանքներով, ինչպես նաև կայունացման ֆոնդի ոչ նպատակային օգտագործման պատճառով առաջացած ֆինանսական ոչ բարվոք իրավիճակը բարելավելու նպատակով մասնաճյուղի գիտական խորհրդի 25.02.2014թ. նիստի որոշմամբ մարտի 1-ից մինչև օգոստոսի 31-ն ընկած ժամանակաշրջանում կատարվել է ոչ դասախոսական որոշ հաստիքների նվազեցում 1 հաստիքից մինչև 0,5 հաստիք: Գիտական խորհրդի 27.08.2014թ. նիստի որոշմամբ վերականգնվել են նշված հաստիքները, սակայն նախկինի համեմատ ցածր դրույքաչափերով: Այդ իսկ պատճառով էլ չի հաջողվել ապահովել ռազմավարական ծրագրով նախանշված աշխատողների միջին ամսական աշխատավարձի 20% աճի ցուցանիշը՝ ոչ դասախոսական կազմի մասով (Ոչ դասախոսական կազմի աշխատավարձի բարձրացում վերջին անգամ կատարվել է 2013 թվականին՝ չհաշված նվազագույն աշխատավարձին): Նշենք, որ առաջացած ֆինանսական իրավիճակը մեղմելու նպատակով ԶՊՄԿ ՓԲԸ-ն անվերադարձ մասնաճյուղին տրամադրել է 20 մլն դրամ գումար:

Այսպիսով, նախկին ռազմավարական ծրագրով առաջադրված խնդիրները 2017-2021թթ. համար նս պահպանում են իրենց կարևորությունը: Անհրաժեշտ է, ոչ միայն ուշադրություն դարձնել ուսանողական համակազմի ավելացման, վճարովի կրթական ծառայությունների մատուցման ընդլայնման միջոցով ֆինանսական ներհոսքերի մեծացմանը, ներդրումների ներգրավմանը, այլ նաև քայլեր ձեռնարկել ձեռնարկատիրական գործունեության իրականացման ուղղությամբ:

Ներդրումների ներգրավումը և ֆինանսական ներհոսքերի մեծացումը, ռեսուրսների արդյունավետ կառավարումը և ռեսուրսախնայողության քաղաքականությունը կապահովեն ֆինանսական կայունություն, որը թույլ կտա ապահովել նաև աշխատավարձերի շարունակական աճ:

**Ն Պ Ա Տ Ա Կ 6 ՄԱՍՆԱՃՅՈՒՂՆ ԱՊԱՀՈՎԵԼ ԱՐԴԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԻՆ ՀԱՄԱՀՈՒՆՉ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐՈՎ, ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԻՐԱՌՈՒՄ**

2011 թվականին մասնաճյուղում առկա էր 43 համակարգիչ: Ուսումնական գործընթացում օգտագործվում էր 33, զուտ հետազոտական աշխատանքների իրականացման համար՝ 7, մասնաճյուղի կառավարման համակարգում՝ 3 համակարգիչ: 2012-2016թթ. ձեռք են բերվել 48 նոր համակարգիչներ: Առկա համակարգիչներից 56-ը օգտագործվում են ուսումնական գործընթացում և գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար, մասնաճյուղի կառավարման համակարգում՝ 24 համակարգիչ: Ուսանողների տարեկան միջին թվի և ուսումնական գործընթացում ներգրավված քումփյութերների թվի հարաբերակցությունը 2011 թվականին կազմել է 12,79, իսկ 2016 թվականին՝ 7,48 (նախատեսված էր ոչ ավելի

քան 7): 11 հին համակարգիչներ պիտանի չեն շահագործման և ենթակա են դուրս գրման:

2014 թվականի ամսականից գործարկված է Մոբայլ լուծումների լաբորատորիան՝ հազեցված 30 համակարգչով և համապատասխան տեղեկատվական սարքերով: 2016 թվականի գարնանն իր գործունեությունը սկսեց Ինժեներական լաբորատորիան՝ համալրված 6 համակարգիչներով և համապատասխան տեխնիկայով:

Զգալի աշխատանք է տարվել նաև ինտերնետ կապի բարելավման ուղղությամբ: Ի տարբերություն 2011 թվականի (512 կբիթ/վ) մասնաճյուղն արդեն 2012 թվականին օգտվում էր օպտիկաթելքային 6 Մբ/վ սիմետրիկ կապից, իսկ 2016 թվականին ինտերնետ կապի թողունակությունը հասցվեց 20 Մբ/վ: Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումն առավել մատչելի դարձնելու նպատակով ուսումնական մասնաշենքերը ապահովված են անլար ինտերնետ կապով:

Մասնաճյուղում ստեղծվել է ևս 1 հեռուստուցման լսարան, իսկ տեխնոլոգիական կարողությամբ լսարանների թիվը հասցվել է 5-ի:

Ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակաշրջանում, կարևորելով համացանցում ներկայացվածության անհրաժեշտությունը, խնդիր դրվեց ունենալ մասնաճյուղի պաշտոնական կայք, որը հաջողությամբ իրականացվեց, և seuakapan.com (ներկայումս՝ haphkapan.com) կայքը գործարկվեց 2013 թվականի նոյեմբերի 9-ին: Պաշտոնական կայքի առկայությունը հնարավորություն ընձեռեց գործուն դարձնել մասնաճյուղ-հասարակություն կապը, թափանցիկ դարձնել մասնաճյուղի գործունեությունը: Համալսարանի և մասնաճյուղի մասին տեղեկատվության տարածումն ընդլայնելու նպատակով 2014/15 ուսումնական տարում գործարկվեց ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի ֆեյսբուքյան պաշտոնական էջը:

Մոբայլ լուծումների և Սյունիքի մարզի դպրոցականների համար ինժեներական լաբորատորիաներում 2015 և 2016 թվականներին Կապանի և Քաջարանի շուրջ 380 դպրոցականների համար կազմակերպվել են ծրագրավորման դասընթացներ, իսկ 2016 թվականին Ինժեներական լաբորատորիայում ռոբոտաշինության խմբակին մասնակցել են մասնաճյուղի՝ 25 և Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջի 5 ուսանողներ, 39 կապանցի դպրոցականներ:

Մասնաճյուղի նորաստեղծ GOLDI հեռավար հիբրիդային լաբորատորիան կարող է զգալի դերակատարություն ունենալ ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների հեռավար վերապատրաստման, այդ ոլորտում հեռակառավարման և ավտոմատացված կառավարման համակարգերի մշակման նորարարական խնդիրների լուծման գործընթացում:

Մասնաճյուղն ունի անհրաժեշտ նախադրյալներ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի տարածաշրջանային կենտրոն դառնալու համար: Անհրաժեշտ է աշխատանքներ տանել հանրությանը ՏՏ ոլորտի ծառայությունների մատուցման, մատուցվող ծառայությունների ընդլայնման և բազմազան դարձնելու նպատակով պետական, հանրային և ոչ կառավարական կառույցների ու հիմնադրամների հետ համագործակցության զարգացման ուղղությամբ:

Ամփոփելով սույն նպատակի կատարման արդյունքները՝ արձանագրենք, որ տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ կիրառման, մասնաճյուղի տեղեկատվական ռեսուրսների շարունակական զարգացման ու մատչելիության ապահովման, կառավարման էլեկտրոնային համակարգի զարգացման, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի տարածաշրջանային կենտրոն դառնալու խնդիրները պահպանում են իրենց ռազմավարական կարևորությունը նաև հաջորդ հնգամյակում:

Ն Պ Ա Տ Ա Կ 7 ԶԱՐԳԱՑՆԵԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ ԵՎ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ-ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՏԱՆԵԼ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Ռազմավարական ծրագրի իրականացման սկզբնական ժամանակաշրջանում

մասնաճյուղի ամբիոնների գիտական հենքը հիմնականում ընդգրկում էր 1963-1999թթ. արտադրության ֆիզիկապես և բարոյապես մաշված լաբորատոր սարքավորումներ ու հաստոցներ, և լուրջ համայրման ու արդիականացման կարիք ուներ: Այդ ուղղությամբ իրականացված աշխատանքների շնորհիվ մասնաճյուղում ստեղծվեցին արդիական սարքավորումներով հագեցված «Ճարտարագիտական լաբորատորիա»-ն և GOLDI հիբրիդային լաբորատորիան, որոնք կօգտագործվեն ինչպես ուսումնական, այնպես էլ հետազոտական նպատակներով:

Շոշափելի արդյունքեր են արձանագրվել մասնաճյուղի գիտական ներուժի զարգացման առումով. 1 դասախոս պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ 3-ը՝ թեկնածուական ատենախոսություն: Եթե 2012/2013-2016/2017 ուստարին հայցորդների թիվը 1-ից աճեց մինչև 6-ը (2-ը պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն): 2016/2017 ուսումնական տարում հիմնական դասախոսական կազմում գիտական աստիճան ունեցողների թիվը կազմեց 14 դասախոս: Ներկայումս գիտահետազոտական աշխատանքներում ընդգրկված են հիմնական դասախոսական կազմի 51,4%-ը (18 դասախոս):

2011/2012-2016/2017 ուստարիներին հիմնական դասախոսական կազմի գիտահետազոտական աշխատանքների արդյունքները, որոնք ընդգրկում են 9 բնագավառ (10 մասնագիտություն), հրատարակվել են 86 հոդվածներում (այդ թվում 22-ը՝ արտասահմանյան ամսագրերում) և գիտաժողովներում զեկուցվել է 37 աշխատանք (այդ թվում 6 արտասահմանյան գիտաժողովներում): 2016 թվականին արտերկրի բարձր վարկանիշ ունեցող գիտական հանդեսներում հոդվածներ տպագրելու համար պարզևատրվել են 3 աշխատակից:

Մասնաճյուղում ստեղծված են բոլոր հնարավորությունները ազատորեն օգտվելու հանրապետական և միջազգային անվճար գիտատեղեկատվական ցանցերից: Ներկայումս մասնաճյուղի դասախոսները հնարավորություն ունեն օգտվելու eLibrary համակարգից:

Կանոնավոր կերպով կազմակերպվել են նաև ամենամսյա գիտակրթական սեմինարներ: Իսկ 2013 թվականի ապրիլ ամսին մասնաճյուղում կազմակերպվեց ՀՊՃՀ (Պոլիտեխնիկ) հիմնադրման 80-ամյակին նվիրված «Ճարտարագիտական կրթություն. ընդհանուր և տարածաշրջանային հիմնախնդիրներ և լուծումներ» խորագրով գիտաժողով:

2012-2016թթ. արդյունաբերական ձեռնարկության («Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ) պատվերով և ֆինանսավորմամբ իրականացվել է ընդամենը 1 տնտեսամասնագրային գիտահետազոտական նախագիծ 2 տարի ժամկետով, 18 մլն. ՀՀ դրամ ընդհանուր ֆինանսավորմամբ (թիվ Գ01/2010 «Պղնձամոլիբդենային հանքանյութի ֆլոտացման տեխնոլոգիական գործընթացի հավանականային կառավարման նմանակային մոդելի մշակում» թեմայով), որը մասնաճյուղի պատմությունում առաջին տնտեսամասնագրային գիտահետազոտական նախագիծն է (Պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների արդյունքներով տպագրվել են շուրջ 20 գիտական հոդվածներ (8-ը արտերկրում) և մեկ գիտական մենագրություն (գերմանական LAP Lambert Academic Publishing հրատարակչության կողմից):

Ռազմավարական ծրագրով նախատեսված էր մասնաճյուղի տարբեր պրոֆիլների գիտական ներուժն առավել արդյունավետ օգտագործելու նպատակով իրականացնել համատեղ գիտահետազոտական աշխատանքներ, ինչպես նաև համատեղ հետազոտություններ իրականացնելու նպատակով ամբիոնների և գործընկերներ ձեռնարկությունների միջև հաստատել ակտիվ հետազոտական կապեր: Մակայն չի հաջողվել իրականացնել այդ խնդիրները, որոնց դրական լուծման ճանապարհին հիմնականում խոչընդոտներ են հանդիսացել մասնաճյուղի ամբիոնների մի մասում գիտական համապատասխան ներուժի սակավությունը և առանձին ամբիոնների գիտական ուղղվածության առանձնահատկությունները, ինչպես նաև՝ գործընկեր ձեռնարկությունների ցածր շահագրգռվածությունը:

Արձանագրենք նաև, որ պարբերաբար ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի կողմից հայտարարված մրցույթներին ներկայացվել են հայտեր, սակայն ոչ մի հայտ չի բավարարվել:

Գիտական ներուժի առկա պոտենցիալը դեռևս թույլ չի տալիս գիտամանկավարժական

կազմին ընդգրկվել միջազգային գիտական նախագծերում, ինչպես նաև մասնաճյուղին՝ մասնակցել համալսարանում իրականացվող միջազգային գիտական ծրագրերին:

Այսպիսով, գիտական ներուժի և գիտական հենքի զարգացումը, առկա գիտահետազոտական լաբորատորիաների նպատակային օգտագործումը, մասնաճյուղ-տնտեսություն փոխշահավետ հետազոտական կապերի ստեղծումը և գիտահետազոտական աշխատանքներում դասախոսական կազմի ներգրավվածության ընդլայնումը, կիրառական հետազոտությունների իրականացումը, դրանց արդյունավետության բարձրացումը և ինովացիոն կողմնորոշվածությունը, միջազգային գիտական ծրագրերում ընդգրկվելուն նպատակատուղիված աշխատանքների իրականացումը, կրկին առաջադրվում են որպես 2017-2021թթ. համար կարևորագույն ստրատեգիական խնդիրներ:

Ն Պ Ա Տ Ա Կ 8 ԸՆԴԼԱՅՆԵԼ ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ, ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԱՊԱՀՈՎԵԼ ԱՐՏԱՔԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ, ԶԱՐԳԱՅՆԵԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ

Վերլուծելով սույն նպատակի կատարման արդյունքները արձանագրում ենք, որ 2012-2016թթ. զգալի աշխատանք է իրականացվել գործընկերային կապերի զարգացման և ընդլայնման ուղղությամբ: Մինչև 2012 թվականը մասնաճյուղն արտաքին շահակիցների հետ չունեի երկարաժամկետ համագործակցության պայմանագրեր: 2012 թվականին կնքվեցին 6, 2013 թվականին՝ 12, 2014 թվականին՝ 7, 2015 թվականին՝ 2 և 2016 թվականին՝ 2 երկարաժամկետ համագործակցության պայմանագիր, որոնց թվում՝ «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի կնքված ռազմավարական համագործակցության և ուսանողների պրակտիկաների անցկացման պայմանագրեր, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի և «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ի հետ՝ ուսանողների պրակտիկաների անցկացման պայմանագրեր:

Միաժամանակ հարկ է նշել, որ անհրաժեշտ է ավարտին հասցնել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի և «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ի հետ ռազմավարական համագործակցության պայմանագրերի կնքման գործընթացը, առավել ակտիվացնել աշխատանքները մասնաճյուղ-տնտեսություն փոխկապակցության գործուն համակարգի ստեղծման ուղղությամբ, ինչպես նաև՝ պարբերաբար իրականացնել ուսանողների և դասախոսների հանդիպումներ հիմնական գործատու կազմակերպությունների և աշխատաշուկային առնչվող հասարակական կառույցների ներկայացուցիչների հետ:

Նշենք, որ չի հաջողվել լեռնահանքային ոլորտի ձեռնարկությունների հետ համատեղ ստեղծել ուսումնական կենտրոններ (ամբիոններ, լաբորատորիաներ), գործատուներին լիարժեքորեն ներգրավել ամբիոնների (լաբորատորիաների) զարգացման ծրագրերում:

Հավելենք, որ 2012-2016թթ. ուսանողների համար իրականացվող սոցիալական ծրագրերի շրջանակներում մասնաճյուղը համագործակցել է մի շարք կազմակերպությունների հետ: Նշված կազմակերպությունների կողմից ուսանողներին տրամադրվել են կրթաթոշակներ և փոխհատուցվել են ուսման վարձեր մոտ 49,3 մլն. ՀՀ դրամի չափով: Այդ կազմակերպություններից նշենք «ԵՐՊԻ-ՀՊՃՀ Շրջանավարտների միություն» ՀԿ Լոս-Անջելեսի շրջանավարտների միությունը, ՎիվաՄեյ-ՄՏՍ («Ղ-Տեյեկոմ» ՓԲԸ) ընկերությունը, «ՕՐԱՆԺ ԱՐՄԵՆԻԱ» հիմնադրամը, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամը, ԶՊՄԿ արհեստակցական կազմակերպությունը:

Ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակաշրջանում ներդրում կամ նվիրատվություն են կատարել ընդամենը 3 կազմակերպություն՝ 2014 թվականին՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ – 20 մլն. ՀՀ դրամ, 2016 թվականին՝ «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ԻԱՄ – 3,037 մլն. ՀՀ դրամի և «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղը – 221,5 հազ. ՀՀ դրամի չափով:

2011/12-2016/2017 ոստարիներին մասնաճյուղի գործունեության արտաքին լուսաբանման նպատակով Սյունիքի մարզի ողջ տարածքով հեռարձակվող («ՍՈՄԻ») և Կապան քաղաքում հեռարձակվող («ԽՈՒՍՏՈՒՓ ԹԻՎԻ») հեռուստաալիքներին, «ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ» մարզային թերթին, ինչպես նաև «Պոլիտեխնիկ» պաշտոնական ամսաթերթին ուղարկվել են հոդվածներ, տրամադրվել նյութեր, տրվել հարցազրույցներ, որոնց հիման վրա պատրաստված հեռարձակված, տպագիր ու էլեկտրոնային լրատվական միջոցներում լույս տեսած հրապարակումների շնորհիվ հանրությունն իրազեկվել է ներմասնաճյուղային կյանքին առնչվող առավել հետաքրքիր և կարևոր միջոցառումների ու իրադարձությունների մասին (81 տրամադրված նյութեր, 28 հարցազրույցներ): Մասնաճյուղի գործունեությանն առնչվող անդրադարձները ՁԼՄ-ներում կազմել է 77:

Նշենք, որ լիարժեքորեն չի իրականացվել և ավարտին չի հասցվել մասնաճյուղի գործունեության վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությունը, մասնաճյուղի հնարավորությունների և ծառայությունների մարքեթինգի միասնական ծրագրի ձևավորումն ու այն հանրությանը ներկայացնելը: Մասնաճյուղը պետք է ակտիվացնի նաև աշխատանքները հանրային կարիքներին ուղղված տարածաշրջանային (տեղական) ծրագրերում ակտիվ ներգրավման և PR գործունեությունն առավել օպերատիվ ու նպատակային դարձնելու ուղղություններով:

2012-2016թթ. մասնաճյուղը շարունակել է արտասահմանյան առաջատար ԲՈՒՀ-երի հետ միջազգային համագործակցությունը TEMPUS միջազգային նախագծի շրջանակներում: 2012 թվականից մասնաճյուղն առաջին անգամ որպես ինքնուրույն կատարող ընդգրկվեց Իլմենաուի (Գերմանիա) տեխնիկական համալսարանի (ԻՏՀ) համակարգմամբ, Եվրոպական երկրների 9 բուհի եւ 13 ընկերության մասնակցությամբ, շուրջ 1 մլն Եվրո ֆինանսավորմամբ իրականացվող TEMPUS «Արտադրական համագործակցություն և հեռավար ու վիրտուալ գործիքամիջոցների վրա հիմնված ստեղծագործ ճարտարագիտական կրթություն» նախագծում (530278-TEMPUS-1-2012-1-DE-TEMPUS-JPHES, կրճատ՝ ICo-op TEMPUS), որի արդյունքում մասնաճյուղում ստեղծվեց տեղեկատվական տեխնոլոգիաների ուղղվածության GOLDI (Grid of Online Laboratory Devices Ilmenau՝ Իլմենաուի հեռավար լաբորատոր սարքերի ցանց) հիբրիդային լաբորատորիան: Նախագծի շրջանակում մասնաճյուղի կատարող խմբի կողմից մշակված երկու արդյունաբերական և մեկ բազային ուսումնական մոդուլների կիրառությամբ իրականացվել են վարժանքներ Սյունիքի մարզի արդյունաբերական ձեռնարկությունների ավտոմատացման ոլորտի մասնագետների և մասնաճյուղի «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» մասնագիտության ուսանողների հետ: ICo-op TEMPUS նախագծի արդյունքներն ընդհանուր առմամբ որոշակիորեն կնպաստեն հասարակության մեջ մասնաճյուղի դերի ամրապնդմանը և վարկանիշի բարձրացմանը, շարունակական կրթության զարգացմանն ու մասնագիտական աշխատաշուկայի հետ կապերի ամրապնդմանը:

Մասնաճյուղը համալսարանի կազմում մասնակցել է նաև Եվրամիության TEMPUS ծրագրի «Համալսարան-գործատու հայկական համակարգման գործակալություն» («ԱՐԱՐԱՍ») անվանումով նախագծին: Այդ և ICo-op TEMPUS ծրագրի իրականացման ժամանակաշրջանում իրականացվել է 13 արտասահմանյան գործուղում:

Մասնաճյուղը շարունակում է գործուն մասնակցություն ունենալ Բոլոնիայի գործընթացի հայաստանյան զարգացումներին՝ որոշակիորեն նպաստելով այդ գործընթացում համալսարանի առաջատար դերի պահպանմանը:

Անհովիտով սույն նպատակի կատարման արդյունքները՝ արձանագրենք, որ չնայած իրականացված զգալի աշխատանքներին, գործընկերային կապերի զարգացումը և ընդլայնումը, մասնաճյուղի զարգացման ծրագրերում արտաքին օժանդակության ներգրավումը, հասարակության հետ կապերի զարգացումը, հանրային ծրագրերում մասնաճյուղի առավելագույն ներգրավվածության ապահովումը, միջազգային ծրագրերին մասնակցությունը մնում են որպես ստորատեղիական կարևոր խնդիրներ նաև 2017-2021թթ. համար:

**ՀԱՊՀ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՈՒԺԵՂ ՈՒ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ,
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ (SWOT)**

1	Ուժեղ կողմեր (Strengths)
Ու 1	Մասնաճյուղի ուսանողների արտադրական ուսուցման և փորձառության հզոր հենք (բազա) արդյունաբերական ձեռնարկություններում (ԶՊՄԿ, ԿԼՀԿ, ԱՊՄԿ)
Ու 2	Տարածաշրջանի լեռնահանքային արդյունաբերության ոլորտի ձեռնարկություններում մասնաճյուղի շրջանավարտների մասնագիտությունների զծով ճարտարագետների պահանջարկ և աշխատատեղերի առկայություն
Ու 3	Մասնաճյուղի շրջանավարտների առկայություն Սյունիքի մարզի տնտեսական, արդյունաբերական ղեկավար և ճարտարագիտատեխնիկական կազմում
Ու 4	Համակողմանի աջակցություն մասնաճյուղին Սյունիքի մարզպետարանի կողմից
Ու 5	Մերտ համագործակցություն մարզի արդյունաբերական ձեռնարկությունների հետ՝ ուսանողների պրակտիկաների կազմակերպման ոլորտում
Ու 6	Մարզի արդյունաբերական ձեռնարկություններում ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի փորձաքննության անցկացման հնարավորություն և ուսանողների ծառայունակության վերաբերյալ հետադարձ կապի առկայություն
Ու 7	Ֆինանսական և այլաբնույթ ակնկալվող աջակցություն ԶՊՄԿ ՓԲ ընկերության և այլ պատվիրատու ու գործընկեր կազմակերպությունների կողմից:
Ու 8	Զարգացած ինֆորմացիոն ինֆրակառուցվածք և դրա շարունակական բարելավման միտում
Ու 9	Միջազգային նախագծերի ինքնուրույնաբար կատարման հաջողված փորձ
Ու 10	Կարիքավոր ուսանողների հնարավոր ֆինանսական աջակցություն ԶՊՄԿ ՓԲ Ը և մարզի այլ ձեռնարկությունների կողմից
Ու 11	Ճարտարագիտական կրթության և տեխնիկական գիտությունների ասպարեզում առաջատար, իսկ որոշ ճյուղերում մենաշնորհային դիրք Սյունիքում
Ու 12	Դասախոսական կազմի և վարչակազմի միջին տարիք
Ու 13	Մասնաճյուղի մասնաշենքերի տեխնիկական վիճակի և շահագործման պայմանների շարունակական բարելավման միտում
2	Թույլ կողմեր (Weaknesses)
Թ 1	Հիմնական դասախոսական կազմում գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսների ցածր մասնաբաժին
Թ 2	Դասախոսական կազմի համայրման սահմանափակ ռեսուրսներ
Թ 3	Գիտական աստիճան ունեցող երիտասարդ դասախոսների՝ մասնաճյուղում աշխատելու ցածր շահագրգռվածություն
Թ 4	Դասախոսական կազմի՝ հետազոտական աշխատանքներում անբավարար ներգրավվածություն և ցածր շահագրգռվածություն
Թ 5	Հնացած ուսումնական կահույք, ուսումնական սարքավորման նորացման կարիք ֆիզիկայի, քիմիայի, էլեկտրատեխնիկայի լաբորատորիաներում
Թ 6	Արդյունաբերական ձեռնարկությունների կողմից ֆինանսավորվող գիտահետազոտական նախագծերի բացակայություն և մասնաճյուղում իրականացվող հետազոտական աշխատանքների նկատմամբ դրանց կողմից դրսևորվող ցածր շահագրգռվածություն
Թ 7	Փոքր թվակազմով (մանրատված) ուսումնական խմբեր և ուսանող/դասախոս ցածր հարաբերակցություն
Թ 8	Որոշ դասընթացներից լաբորատոր աշխատանքների կատարման ոչ բավարար մակարդակ

Թ9	Պետբյուջեի կողմից ֆինանսավորվող գիտահետազոտական նախագծերի և բազային լաբորատորիաների բացակայություն
Թ10	Ուսանողների, հատկապես հեռակա ուսուցմամբ, ցածր ուսումնական շահագրգռվածություն
Թ11	Ուսումնական գործընթացում արդիական տեղեկատվական տեխնոլոգիաների և ուսուցման էլեկտրոնային միջոցների կիրառության ոչ բարձր մակարդակ
Թ12	Մասնաճյուղի կազմում ավագ դպրոցի բացակայություն
Թ13	Դասախոսների և այլ աշխատողների աշխատավարձերի նախկինում դիտարկվող ամենամյա կայուն աճի միտման բացակայություն
Թ14	Առկա-հեռակա ուսուցման ձևից դասական հեռակա ուսուցման անցմամբ պայմանավորված առաջադիմության անկում հեռակա ուսուցման համակարգում
3	Հնարավորություններ (Opportunities)
Հ1	Տարածաշրջանի արդյունաբերական ձեռնարկություններում մասնաճյուղի շրջանավարտների աշխատանքով ապահովելու լայն հնարավորություն
Հ2	Արդյունաբերական ձեռնարկությունների կողմից ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի փորձաքննության անցկացման հնարավորություն
Հ3	Եկամտի աղբյուրների բազմազանացում՝ արդյունաբերական ձեռնարկությունների աշխատողների զբաղվածության կենտրոնի դիմորդների շարունակական կրթության, որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացների միջոցով
Հ4	Նախապատրաստական դասընթացների կազմակերպում բուհի ակնկալվող դիմորդների համար
Հ5	Գործակցություն հիմնական գործատու կազմակերպությունների հետ՝ ուղղված կրթական ծրագրերի արդիականացմանը և մասնաճյուղի շրջանավարտների ծառայունակության բարձրացմանը
Հ6	ՀԱՊՀ-ի պրոֆեսորադասախոսական ռեսուրսների օգտագործմամբ հեռավար կրթության, ուսումնառության ոչ ավանդական ճկուն ձևերի, նոր կրթական տեխնոլոգիաների ներմուծում մասնաճյուղի մուտքի ընդլայնման նպատակով
Հ7	Ուսումնական գործընթացում վիրտուալ և հիբրիդային լաբորատորիաների օգտագործման հնարավորություն
Հ8	Ներգրավում տարածաշրջանային հանրային ծրագրերում և ծառայություններում
Հ9	Գործարար և արտադրական գործակցային կապերի զարգացում Սյունիքի մարզի հիմնարկ ձեռնարկությունների հետ
Հ10	Ուսանողական զարգացող ինքնավարություն և մասնակցություն մասնաճյուղի կառավարման գործընթացներում
Հ11	Արդյունաբերական ձեռնարկությունների կողմից ֆինանսավորվող գիտահետազոտական աշխատանքների արդյունքների առևտրայնացում
Հ12	Տեղեկատվական տեխնոլոգիաների առավել լայն կիրառություն մասնաճյուղի գործունեության բոլոր ոլորտներում ինտերնետային ռեսուրսների շարունակաբար զարգացման պարագայում
Հ13	Սյունիքի լեռնահանքային ձեռնարկությունների տնտեսական աճի բարձր տեմպեր, ճարտարագիտական կադրերի և մասնաճյուղի վճարովի ծառայությունների պահանջարկի առկայություն
Հ14	Մագիստրոսական կրթական ծրագրի իրականացում
Հ15	Մարզի գործատու ընկերությունների համաֆինանսավորմամբ մասնաճյուղին կից ուսումնագիտական կենտրոնի ստեղծում
4	Մարտահրավերներ (վտանգներ)
Վ.1	Մասնաճյուղի հետազոտական ծառայությունների ցածր պահանջվածություն տարածաշրջանում

Վ 2	Տարածաշրջանում առկա բուհերի ցանկում տեխնիկական մասնագիտություններով բակալավրական կրթական ծրագրերի ներմուծմամբ պայմանավորված բուհերի միջև աճող մրցակցություն
Վ 3	Տարածաշրջանում դեմոգրաֆիական անցանկալի փոփոխությունների հետևանքով դպրոցների շրջանավարտների թվի նվազմամբ և այլ անբարենպաստ գործոններով պայմանավորված մասնաճյուղի դիմորդների նվազում
Վ 4	Մասնաճյուղում ուսուցանվող մասնագիտությունների ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի հաճախակի փոփոխությունների մեծ հավանականություն
Վ 5	Պրոֆեսորադասախոսական կազմում գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսների ցածր մասնաբաժնի պատճառով որոշ մասնագիտությունների հավատարմագրման դժվարություն
Վ 6	Մասնաճյուղի և Սյունիքի լեռնահանքային արդյունաբերության ձեռնարկությունների աշխատողների աշխատավարձերի մակարդակների աճող անհամապատասխանություն
Վ 7	Մոցիալ-տնտեսական, բնապահպանական և հայ-ադրբեջանական հակամարտության ու այլ անցանկալի գործոններով պայմանավորված տարածաշրջանային անկայունություն ու բնակչության չնվազող արտագաղթ